ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Հեռակա ուսուցման 1519 թողարկում

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԲԻՈՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԵՎ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

«Հանրային կառավարում» մասնագիտությամբ հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Մագիստրանտ՝ **Հայկ Ռաֆայելի Առաքելյան**

Ղեկավար՝ **Թերեզա Բաղիշի Խեչոյան**

Ամբիոնի վարիչ՝ **Վիլեն Վիկտորի Խաչատրյան**
տնտ.գիտ.թեկնածու, դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ 7

1.1. «Բնակչության կենսամակարդակ» և «կյանքի որակ» հասկացությունները 7

1.2. Կենսամակարդակի և կյանքի որակի գնահատման տեսական մոտեցումները 12

1.3. Բնակչության եկամտի կամ սպառման, բաշխման մեթոդաբանական արդի հիմանահարցերը 21

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ 28

2.1. Բնակչության դրամական եկամուտները և աղքատության հաղթահարումը 28

2.2. ՀՀ բնակչության վերարտադրության և կենսամակարդակի կանխատեսման ցուցանիշները 38

ԳԼՈՒԽ 3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 45

3.1. ՀՀ սոցիալական վերափոխումների արդյունավետության բարձրացման ուղիները 45

3.2. Բնակչության դրամական եկամուտների ավելացման և բաշխման պետական կարգավորումը 49

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 68

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 71

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Նախկին ԽՍՀՄ-ի կազմալուծումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունը կանգնեց բազմաթիվ մարտահրավերների առջև. տնտեսական և քաղաքական ճգնաժամը, հսկայական չափերի հասնող գործազրկությունը, արտադրության ծավալի կտրուկ անկումը, տնտեսական շրջափակումը, Արցախյան պատերազմը և 1988-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերացումը, երկրի հարստության բևեռացումը և հասարակության կտրուկ աղքատացումը, ստվերային տնտեսության աճը և զգալի մասշտաբները և այլն, որոնք և հիմք հանդիսացան բնակչության կյանքի որակի վատթարացման համար:

Վերջին երկու տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում իրականացված սոցիալ-տնտեսական բարեփոխումները թեև ուղղված էին բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, ինչպես նաև կյանքի որակի բարելավմանը, սակայն դրանք այդպես էլ չտվեցին իրենց սպասվելիք դրական արդյունքները: Գնալով ավելի է վատանում եկամուտների և կապիտալի բևեռվացվածության աստիճանը և գործազրկության մակարդակը, ավելանում է արտագաղթը՝ ժամանակավոր աշխատանքի և մշտական բնակության մեկնողների թիվը: Իրավիճակն էլ ավելի սրվեց 2008 թ.-ից սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական բազմաթիվ միջոցառումներ ուղղված են բնակչության բարեկեցության բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը: Սրա հետ կապված արդիական են դառնում կյանքի որակի գնահատման բաղադրիչների ընտրությունը և հնարավորինս տարրալուծումը (մասնատումը), որը հնարավորություն կտա վերլուծել կյանքի որակը մաս-մաս և ամբողջությամբ, բացահայտել հասարակության կենսագործնեության բոլոր թույլ և ուժեղ կողմերը:

Կյանքի որակի ուսումնասիրությունը ներկայումս կարևորվում է նաև նրանով, որ այն հանդիսանում է կայուն մարդկային զարգացման չափանիշ, հասարակական կյանքի տարբեր ոլորտների համատեղ զագացման արդյունք, այդ զարգացումն իրականացնող համակարգերի վերահսկման, կառավարման, կազմակերպման և կարգավորման

հնարավորությունների ամբողջություն, և վերջապես մարդկային կապիտալի օգտագործման հնարավորության ցուցանիշ:

Նշված հիմնախնդիրների լուծման հրատապությամբ էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը բնակչության կյանքի որակի բարելավման ուղիների բացահայտումը և բնակչության կյանքի բարձր որակի ապահովման մեխանիզմների ձևավորումն է:

Հետազոտության առարկան բնակչության կյանքի որակի և նրա բաղադրիչների տեսական, հայեցակագային և ծրագրային հիմնախնդիրներն են և դրանց լուծման ուղիների բարելավումը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է, հաշվի առնելով միջազգային փորձը, բնակչության կյանքի որակի և բաղադրիչների գնահատումը և դրա բարելավման ուղիների բացահայտումը Հայաստանի Հանրապետությունում:

Այս նպատակից ելնելով առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել «կենսամակարդակ», «բարեկեցություն» և «կյանքի որակ» հասկացությունների տարբեր սահմանումները ու մեկնաբանությունները, լուսաբանելով սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից փուլին հատուկ դրանց փոխկապվածությունը՝ մշակել «կենսամակարդակ-բարեկեցություն-կյանքի որակ» շղթայում բարեկեցության նոր մոտեցում և ցույց տալ, որ բնակչության կյանքի պայմանների և հատկությունների բնութագրման կիզակետային կամ վերջնական չափանիշը «կյանքի որակ» հասկացությունն է,
- ներկայացնել բնակչության բարկեցությունը որպես սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջացված արտահայտություն և ուսումնասիրել տնտեսական և սոցիալական գործընթացների փոխադարձ կապը Հայաստանի Հանրապետությունում,
- քննարկել բնակչության կյանքի որակի բաղադրիչների ցուցանիշների համակարգը, որը հնարավորինս շատ ցուցանիշների ընդգրկմամբ առավել լիարժեք կբնութագրի ուսումնասիրվող երևույթը և նրա կողմերը,

• հիմնավորել բնակչության կյանքի որակի բարելավման ուղիների կարևորությունը և նրա դրսևորման տարածքային առանձնահատկությունները, ինչպես նաև ցույց տալ կյանքի որակի բարելավման կարևորությունն արդի մարտահրավերների լուծման տեսանկյունից:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական և մեթոդաբանական հիմք են ծառայել բնակչության կենսամակարդակի, բարեկեցությանը և կյանքի որակի հայեցակարգերին նվիրված արտասահմանյան և հայրենական հեղինակների գիտական աշխատությունները: Ուսումնասիրության համար տեսական հիմք են ծառայել օտարերկրյա և հայ հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների և փորձագետների հետազոտությունների արդյունքները ու հրապարակումները, ինչպես նաև զարգացած ու զարգացող երկրների բնակչության հիմնախնդիրների վերաբերյալ տարբեր հեղինակների հրապարակումները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազաները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալները, Հայաստանի Հանրապետության իրավական և նորմատիվային փաստաթղթերը, միջազգային և հայկական տարբեր կառույցների տեղեկագրերը և փորձագիտական գնահատումները, սոցիալական հարցումների և հետազոտությունների արդյունքները:

Ուսումնասիրության իրականացման համար օգտագործվել է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության, պետական կառավարման համապատասխան մարմինների տվյալներն ու տեղեկատու փաստաթղթերը:

Թեզ հիմնական գիտական արդյունքները ու նորույթը: Աշխատության հիմնական գիտական արդյունքներն ունեն կարևոր նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

• Մշակվել է բարեկեցությունը բնութագրող «կենսամակարդակ-բարեկեցություն-կյանքի որակ» փոխկապակցված շղթան, որտեղ «կյանքի որակ» հասկացությունն

առանձնացվել է որպես անհատի և հասարակության կյանքի պայմանների և հատկությունների կիզակետային (վերջնական) բնութագրիչ:

- Հայաստանի Հանրապետության բնակչության կյանքի որակի բարելավման համար

քննարկվել է «համընդհանուր բարեփոխումների» հայեցակարգ, որտեղ առանձնացվել է տնտեսական, սոցիալական և կառավարման բարեփոխումների անհրաժեշտությունը կյանքի որակի բարելավման տեսանկյունից:

- Ներկայացվել է երկրի կապիտալի, արտադրության, բաշխման, սպառման և ներդրման բևեռվածության բացասական ազդեցության հետևանքները բնակչության կյանքի որակի վրա և առաջադրվել է վերջինիս կարգավորման կարևորությունը կյանքի որակի բարելավման հեռանկարների շարքում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, 75 էջ տեքստային մասից, 3 գծապատկերից, 6 աղյուսակից օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1.1. «Բնակչության կենսամակարդակ» և «կյանքի որակ» հասկացությունները

«Կյանքի որակ» հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցրեց քեմբրիջյան դպրոցի ներկայացուցիչ Ա. Պիգուն՝ 20-րդ դարի սկզբին իր «Բարեկեցության տնտեսական տեսությունը» աշխատությունում: Թեև բազմիցս կատարվել են դրա տեսական ընդհանրացման փորձեր, այնուհանդերձ, «կյանքի որակ» գիտական կատեգորիան մինչև օրս շարունակում է մնալ թերմշակ և տարակարծիք: Կյանքի որակը մարդկանց կենսապայմանների ամբողջությունն է, որը ներառում է ինչպես նրանց կենսամակարդակը (այլ կերպ՝ նյութական բարիքների մատչելիությունն ու որակը), այնպես էլ նրա առողջության, շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վիճակը, հոգևոր-մշակութային պահանջմունքների բավարարվածությունը, հոգեկան հավասարակշռության/հարմարավետության վիճակը, հոգևոր հանգստի/հարմարավետության զգացումը[1]:

«Բարեկեցությունն» ևս ընդգրկուն հասկացություն է, որն իր մեջ ներառում է «կենսամակարդակ», «կենսակերպ», «կյանքի որակ», «կյանքի ոճ» հասկացությունները: Իրենց որոշակի տարբերություններով ու առանձնահատկություններով հանդերձ նշված հասկացությունների ընդհանրությունն այն է, որ դրանք բոլորն էլ բնութագրում են բնակչության բարեկեցության բարձրացման այս կամ այն կողմը:

Մի շարք մտածողների, քաղաքական գործիչների և տնտեսագետների կարծիքով 21-րդ դարը որակի դար է, հետևաբար, չնսեմացնելով բարեկեցության մյուս բաղադրատարրերի դերն ու նշանակությունը, գերակա դիրք է ստանում «կյանքի որակ» հասկացությունը: Տնտեսության զարգացման նոր ուղիների որոնումը հանգեցրել է նրան, որ միայն կյանքի որակը կարող է լավագույնս արտահայտել համաշխարհային հասարակության նպատակները, քանի որ մարդկությունը կանգնած է նոր քաղաքակրթության անցման շեմին, այն է՝ «որակի քաղաքակրթություն»:

[1] Философский энциклопедический словарь. —М.: Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев, С. М. Ковалёв, В.Г.Панов. 1983.

Տնտեսագիտական գրականության մեջ «կյանքի որակ» հասկացության միատեսակ սահմանում գոյություն չունի: Յուրաքանչյուր մտածող յուրովի մոտեցում է ցուցաբերում հասկացության վերաբերյալ: Օրինակ, կյանքի որակը (անգլ. quality of life, QOL) հասկացություն է, որի օգնությամբ բնութագրվում է բնակչության կյանքի նյութական չափորոշիչները, արժանապատվության ապահովման մակարդակը և յուրաքանչյուր մարդու անհատականության դրսևորման ազատությունը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանմամբ՝ մշակութային և արժեքային համատեքստում կյանքի որակն անհատների կյանքի դիրքորոշման ընկալումն է՝ ըստ իրենց նպատակների, ակնկալիքների և նորմերի: Կյանքի որակը որոշվում է մարդու կյանքի ֆիզիկական, սոցիալական ու հուզական գործոններով և արտահայտում է կյանքից բավարարվածության մակարդակն ինչպես մարդու ներսում, այնպես էլ մարդուն շրջապատող հասարակության միջակայքում:

Ընդհանուր առմամբ, բնակչության կյանքի որակի գնահատման բազմաթիվ մեթոդներ, եղանակներ են մշակվել: Մենք ևս փորձ ենք արել ներկայացնել բնակչության կյանքի որակի, որպես բնակչության կյանքից բավարարվածության աստիճանի տնտեսական գնահատման մեխանիզմը, վեր հանելով այն հիմնական չափորոշիչները, որոնք էականորեն կազդեն կյանքի որակի վրա: Այսպիսով, առաջարկվող կյանքի որակի տնտեսական գնահատման ցուցանիշն իրենից ներկայացնում է բնակչության 1 շնչի հաշվով դրամական եկամուտների հարաբերությունը նվազագույն սպառողական զամբյուղի արժեքի ու մարդկային կապիտալի վերարտադրության համար անհրաժեշտ դրամական միջոցների հանրագումարին, բազմապատկած սոցիալ-մարդկային կապիտալի ձևավորման գործակցի արտադրյալով.

ԿՈգ= (ԴԵ/(ՍԶ+ՄԿ))*ՍՄԿգ,

Որտեղ՝

ԿՈգ-ը՝ կյանքի որակի տնտեսական գնահատման ցուցանիշն է,

ԴԵ՝ չափահասի հաշվով դրամական եկամուտները,

ՍԶ՝ չափահասի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը,

ՄԿ-ը չափահասի հաշվով մարդկային կապիտալի ձևավորմանն ու կուտակմանն ուղղվող դրամական միջոցները,

ՍՄԿգ- ը՝ չափահասի հաշվով սոցիալ-մարդկային կապիտալի ձևավորման ու կուտակման գործակիցը[2]:

Մեր օրերում մեծ կարեուրություն է ստանում սոցիալական կապիտալի կուտակումն ու ձևավորումը, որը մարդկային կապիտալի հետ գտնվում է փոխադարձ կապվածության և փոխպայմանավորվածության մեջ: Ինչպես ֆիզիկական և մարդկային կապիտալը, այնպես էլ սոցիալական կապիտալն ունի իր ներդրումն արտադրական գործընթացում: Այդ պատճառով վստահելի հեղինակություն և մեծ վստահություն վայելող մարդկանց խումբը կարող է հասնել զգալի հաջողությունների, քան մարդկանց այն խումբը, ով չունի նշյալ հատկանիշները[3]:

Սոցիալ-տնտեսական զարգացման բազմաթիվ մոդելներ ուղղված են բնակչության կենսամակարդակի և բարեկեցության բարձրացմանը, հետևաբար, կյանքի որակի բարելավմանը, որը հասարակությունում ընթացող ցանկացած վերափոխման չափանիշ է ու վերջնական արդյունք:

Սոցիալական տարբեր խմբերի գոյությունը կարևոր է դարձնում այնպիսի մակրոտնտեսական հիմնահարցը, ինչպիսին հասարակական բարեկեցությունն է:

Բարեկեցության բնորոշումը՝ որպես ընդհանուր համակարգի չափորոշիչ չի նույնացվում առանձին տարրերի հավաքածուի հետ, որը մեթոդաբանորեն բարդ խնդիր է, բազմամակարդակ և դինամիկ: Գիտական մտքի զարգացմանը զուգընթաց բարեկեցության մեկնաբանությունը փոխվում, բարեկեցության ընկալումից մինչև նյութական բարեկեցություն, մինչև դրա կազմում այնպիսի տարրերի ընդգրկում, որոնք չեն վերաբերվում տնտեսական բարիքներին՝ առողջությունը, կրթությունը, հանգիստը, մշակութային զարգացումը, շրջակա միջավայրը, քաղաքական ասպարեզը և այլն:

Կենսամակարդակը հանդիսանում է տնտեսական բարեկեցության հիմքը, իսկ կենսակերպը՝ ընդհանուր բարեկեցության հիմքը և իր հերթին այն կախված է տնտեսական բարեկեցությունից: Տնտեսական բարեկեցությունը կարող է չափվել փողի

---

[2] Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017, էջ 8

[3] Coleman J.S., Social Capital in the Creation of Human Capital/Social Capital: a Multifaceted Perspective, Eds. P. Dusgupta, I. Serageldin. Wash. DC: World Bank, 2000, p.19.

օգնությամբ՝ տնտեսական չափիչներով[4], իսկ ընդհանուր կամ սոցիալական բարեկեցությունը կարող է չափվել այնպիսի չափիչներով ինչպիսին է մակարդակը, որակը, այլ ոչ թե բավարարվածության փաստը: Այսինքն՝ «Կյանքի մակարդակ» հասկացությունը հանդես է գալիս որպես բարեկեցության քանակական չափանիշ, իսկ «կյանքի որակ» հասկացությունը՝ որպես բարեկեցության որակական չափանիշ և իր հերթին «կյանքի որակ» հասկացությունը գալիս է լրացնելու «կյանքի մակարդակ» հասկացությունը, այսինքն՝ փոխլրացնում է այն: Հետևաբար, հեղինակի կարծիքով, «բարեկեցություն և կյանքի որակ» հայեցակարգն ունի հետևյալ տեսքը (Գծապատկեր 1) .

Գծապատկեր 1

Բարեկեցության և կյանքի որակի հայեցակարգը[5]



Կյանքի մակարդակը ցույց է տալիս նյութական պահանջմունքների բավարարման աստիճանը և արտահայտվում է քանակապես, իսկ կյանքի որակը բնութագրվում է սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարմամբ և արտահայտվում է որակապես:

Կյանքի մակարդակը և որակը փոխկապակցված են, բայց ոչ նույնականացված: Ավելին, «կյանքի որակը» մարդու (անհատի և հասարակության) կյանքի կենսագործունեության տնտեսական, սոցիալական, հոգեբանական, մշակութային, կրթական, առողջապահական ասպեկտները բնորոշող կիզակետային չափանիշ է և արտահայտում է մարդու (հասարակության) պահանջմունքերի հագեցման որակական մակարդակը:

Կյանքի որակը հասարակության բարեկեցության ամփոփիչ ցուցանիշ է և արտահայտում է մարդկանց պահանջմունքների բավարարման որակական մակար-

[4] Пигу А., Экономическая теория благосостояния, М., 1985, с. 512
[5] Գալոյան Ռ., Բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիները ՀՀ-ում, Եր., 2011, էջ 8

դակը, այսպիսով, «կյանքի որակը» մարդկանց ինքնապահպանման, ինքնակազմակերպման, ինքնաներդրման, ինքնահաստատման, ինքնաարտահայտման և ինքնաիրացման պահանջմունքների բավարարման որակական մակարդակն է, գործունեության բովանդակությունը, որակական մակարդակի գնահատականը:

Կան հեղինակներ, ովքեր կյանքի որակը արտահայտում են սակավ բաղադրիչներով՝ Ջ. Ֆորեստերը և Ժ. Գարդենը, իսկ Ա. Կուզնեցովը, Ջ. Թոմասը և Ջ. Պապագեորգիուն կյանքի որակը արտահայտում են ավելի շատ բաղադրիչների միջոցով: Վերջինս առաջարկում է կյանքի որակի բաղադրիչների ցուցանիշների կրճատում, որ այն չափից ավելի մանրամասնեցնում է մարդու կյանքի վրա տարբեր գործոնների ազդեցությունը[6]: Սակայն, մեր օրերում մեծ կարևորություն է ստանում կյանքի որակի բաղադրիչների ցուցանիշների քանակի ավելացումը, այսինքն՝ այն լիարժեք ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել մարդկանց կյանքի բոլոր կողմերը (սոցիալական, տնտեսական, էկոլոգիական, քաղաքական, առողջական, կրթական, մշակութային, անձնական և այլն):

Երջանկության տնտեսագիտությունը երկրի բարեկեցության վերաբերյալ գիտություն է: Համախառն ազգային երջանկության՝ ՀԱԵ ցուցանիշն որոշ երկրներում դարձել է երկրների համեմատության չափանիշ ավանդական մակրոտնտեսական ցուցանիշների հետ համատեղ, ինչպիսիք են՝ Համախառն ազգային արդյունքը՝ ՀԱԱ և Համախառն ներքին արդյունքը՝ ՀՆԱ):

1972 թվականին Բութանի Վանգչուկ թագավորն առաջինն է առաջարկել ներդնել այդ ցուցանիշը որպես համախառն ազգային արդյունքի այլընտրանքային ցուցանիշ:

2006 թ. հեղաշրջումից հետո Թաիլանդը նույնպես կիրառության մեջ դրեց նշված ցուցանիշը: Երկրի նոր կառավարությունը նպատակ դրեց ոչ միայն ազգային հարստության ավելացման, այլև երջանկության հարցը: ՀՆԱ-ի հետ միասին Թաիլանդը ներկայացնում է ՀԱԵ ցուցանիշն ամսական կտրվածքով: Ցուցանիշը հիմնված է 1-10 սանդղակով կատարված հետազոտության վրա: 2007 թ. Թաիլանդի ՀԱԵ ցուցանիշը 5,1 էր: Դրա հիմքում ընկած էին բնակչության մեջ կատարված հարցումների արդյունքները,

[6] Papageogyiou J., Quality of life indicators, 1976, p. 192

որոնք ընդգրկում էին մի շարք գործոններից բավարարվածության աստիճանը՝ անվտանգություն, լավ կառավարում, սոցիալական արդարություն, կրթություն, կենցաղային սպասարկում և այլն: Ավստրալիան, Կանադան, Չինաստանը, Ֆրանսիան և Միացյալ Թագավորությունը ևս հաշվարկում են ազգային երջանկությունը[7]:

1.2. Կենսամակարդակի և կյանքի որակի գնահատման տեսական մոտեցումները

21-րդ դարի սկիզբը նշանավորվեց նրանով, որ աշխարհի զարգացած երկրներում, ինչպես նաև համաշխարհային պրակտիկայում գերակշռող դեր ունեցան տնտեսության զարգացման ազատական հայացքները, իսկ ԱՄՆ-ում և Եվրոպական բազմաթիվ երկրներում պետության ակտիվությունը շատ մեծ չի եղել՝ այն սահմանափակված է եղել միայն որոշակի ոլորտներով: Զարգացած երկրներում տնտեսության զարգացման գործում և, առհասարակ, բարեկեցության ոլորտում նվաճած հաջողությունները պարտական են նրանց ֆինանսական համակարգի ու ֆինանսական հարաբերությունների խելամիտ ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև արդյունավետ սոցիալական համակարգին և ճիշտ սոցիալական ռազմավարությանը: Զարգացած երկրներում սոցիալական և տնտեսական նվաճումները կարծես լրացրել են մեկը մյուսին: Այս երկրների շարքում ֆինանսական լավ համակարգեր ձևավորված երկրներից առաջնությունը պատկանում է Նիդեռլանդներին, Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին: Իսկ սոցիալական ապահովության համակարգերից ուշադրության է արժանի Մեծ Բրիտանիայի սոցիալական ապահովության ազատական մոդելը, որտեղ սոցիալական ապահովության ծրագրերը խիստ անհատականացված են, որոնց մեծամասնությունը՝ մասնավորեցված, այստեղ ընտրված են բնակչության առանձին կատեգորիաների ընտանեկան օժանդակության սկզբունքը (ներկայումս մինչև 16 տարեկան բոլոր երեխաներին տրվում է նպաստ, իսկ պարտադիր կրթության և առողջապահության համակարգերն այստեղ անվճար են բոլոր քաղաքացիների համար) և Գերմանիայի սոցիալական ապահովության պահպանողական-կորպորատիվ մոդելը, որը

[7] Խեչոյան Թ., Երջանակության տնտեսագիտություն, մեկնաբանություններ և մոտեցումներ, Հանրային կառավարում, 2009, N 1, էջ 46-58

օգտագործվել է մի շարք եվրոպական պետություններում՝ Ֆրանսիա, Ավստրիա և Բելգիա: Գերմանիայում գործում է չորս տեսակի սոցիալական ապահովագրություն՝ կենսաթոշակային, բժշկական, գործազրկության և դժբախտ պատահարների: Այստեղ առանձին ձեռնարկատիրոջ պատասխանատվությունը փոխարինված է պարտադիր կոլեկտիվ պատասխանատվության համակարգով, որը կարգավորվում և վերանայվում է պետության կողմից: Առողջապահական համակարգում գործում է անհրաժեշտ բժշկական ապահովագրության համակարգը, որում ընդգրկված է բնակչության շուրջ 90%-ը, իսկ 8%-ը ներառված է մասնավոր հատվածում և մնացած 2% չունևոր քաղաքացիների համար վճարում է պետությունը: Գերմանիայում կրթական հաստատություն կարող է ընդունվել յուրաքանչյուրը, եթե նա բավարարում է ընդունելության բոլոր պայմաններին, իսկ միջնակարգ կրթությունը այստեղ անվճար է:

Սակայն սոցիալական ապահովության մոդելների առաջատարը հանդիսանում է ԱՄՆի սոցիալական ապահովության մոդելը, որը հիմք է հանդիսացել բարեկեցության և կյանքի որակի ամերիկյան հաղթարշավում: Եկամուտների անհրաժեշտ մակարդակի ապահովման ամերիկյան համակարգը բաղկացած է երկու տեսակի ծրագրերից՝ սոցիալական ապահովագրության ծրագրեր և պետական աջակցության կամ սոցիալական ապահովության ծրագրեր[8]: Այստեղ սոցիալական ապահովագրության հիմնական ծրագրերը ներառում են.

1) սոցիալական ապահովության ծրագիր, որն ընդգրկում է ծերության, անաշխատունակության և կերակրողին կորցնելու ռիսկերից ապահովագրում,

2) գործազրկության նպաստներ,

3) բժշկական օգնության Medicare ծրագիրը:

Զարգացող երկրներում շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման ճանապարհին սոցիալական բաղադրիչը կարծես մղվել է երկրորդական պլան:

Հատկանշական է, որ սոցիալական ոլորտը և եկամուտների վերաբաշխման համակարգը նախկինի պես ևս շարունակում է մնալ տնտեսությունում ամենաքիչ վերահսկվող մասը: Զարգացող երկրներում (հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի) սոցիալական ապահովության համակարգի վերափոխումները ընթացել են

[8] Макконел К.Г., Брю С.Л., Экономика, 16-е, Москва, 2006, с. 187-189.

հետևյալ ուղղություններով՝ գործազրկության ժամանակավոր նպաստի տրամադրում, կենսաթոշակային տարիքի բարձրացում, սոցիալական ազգակցության համակարգի կատարելագործում, առողջապահական ֆինանսավորման խառը համակարգի ներդրում, ընտանեկան նպաստների համակարգի բարելավում: Այս երկրներում սոցիալական ոլորտի բարելավման ուղիներից են աշխատուժի շուկայում իրականացվող բարեփոխումները և ծրագրերը, որտեղ կարևորվում է գործազրկությունից ապահովագրման համակարգին անցումը: Ինչ վերաբերում է կրթությանն ու առողջապահությանը, պետք է արձանագրել, որ ռեսուրսների սակավությունը զարգացող երկրներում շատ հաճախ հիմք է հանդիսանում այդ միջոցների անարդյունավետ տեղաբաշխմանը:

Բնակչության կենսամակարդակի համակարգված ուսումնասիրումը հնարավոր է միայն վիճակագրական ցուցանիշների համակարգի օգնությամբ: Միջազգային մասշտաբով կենսամակարդակի վիճակագրության զարգացումը սկսվել է անցյալ դարի 60-ական թվականներից: 1978թ. ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից մշակվեց և կիրառման համար երաշխավորվեց կենսամակարդակի ցուցանիշների 12 խումբ ներառող հետևյալ համակարգը.

1. ծնելիություն, մահացություն և ժողովրդագրական այլ բնութագրիչներ
2. կյանքի սանիտարահիգիենիկ պայմաններ
3. պարենային ապրանքների սպառում
4. բնակարանային պայմաններ
5. կրթություն և մշակույթ
6. աշխատանքի պայմաններ և զբաղվածություն
7. բնակչության եկամուտներ և ծախսեր
8. կյանքի արժեք և սպառողական գներ
9. տրանսպորտային միջոցներ
10. հանգստի կազմակերպում
11. սոցիալական ապահովություն
12. մարդու ազատություն[9]:

[9] armeco.am/_ld/6/691_mardzargacum.doc

Ցուցանիշների երաշխավորվող համակարգի հիման վրա առանձին երկրներ սկսեցին մշակել կենսամակարդակի գնահատման ցուցանիշների սեփական համակարգերը: Հայաստանի Հանրապետությունում բնակչության կենսամակարդակի ուսումնասիրումն իրականացվում է Համաշխարհային բանկի մեթոդաբանական օժանդակությամբ և ներառում է բարեկեցությունը բնութագրող հիմնական ցուցանիշների խմբերը:

Կյանքի որակի բազմագործառնական օգտագործման գլխավոր պատճառներից մեկը վերլուծվող բաղադրիչներն են, դրանց թիվը և բաղադրման աստիճանը: Հետաբար, կյանքի որակի ճիշտ գնահատման համար կարևոր նշանակություն են ձեռք բերում վերլուծվող բաղադրիչները և դրանց մանրամասնման աստիճանը[10]:

Կյանքի որակի վերլուծվող բաղադրիչները և նրանց մանրամասնման աստիճանը կախված են նաև այն հանգամանքից, թե ինչպիսի տարաբնակեցման համակարգում է վերլուծվում այն. տարբեր տիպի տարաբնակեցման համակարգերում տարբեր են կյանքի որակը պայմանավորող գործոնները: Կյանքի որակը գնահատվում է ամբողջ Երկրի համար: Օրինակ, այդպիսի համակարգ է 1963թ.-ին ՄԱԿ-ի փորձագետների կողմից մշակված դասակարգումը, որը օգտագործվում է ոչ միայն զարգացած, այլ նաև զարգացող երկրների համար[11]: Կամ այդպիսի մոտեցման մեկ այլ օրինակ է համաշխարհային բանկի կողմից կիրառվող համակարգը[12] և այլն:

Կյանքի որակի բաղադրիչների մասին պատկերացումները ինչպե՞ս են արտահայտված «կյանքի որակի» բնորոշումներում: «Կյանքի որակ» հասկացության բնորոշումներում միշտ չէ, որ ընդգծվում է կյանքի որակի վրա ազդող գործոնների դերը, շատ դեպքերում կյանքի որակի բաղադրիչները իրենց արտացոլումը չեն գտնում հասկացության բնորոշումներում:

Նմանատիպ մոտեցում է հեղինակների մոտ նաև կյանքի որակի ցուցանիշների համակարգերի մշակման ժամանակ: Կան հեղինակներ, որոնք կյանքի որակն արտահայտում են մի քանի ինտեգրալ ցուցանիշների միջոցով: Օրինակ, ըստ

---

[10]Սարիբեկյան Ա. Լ, Կյանքի որակը՝ որպես աշխարհագրական հետազոտության առարկա, «Աշխարհագրություն 99», Եր. 1999

[11] Народонаселение: энциклопедический словарь. Ред. колл. А. Кваша, Г. Меликян и др. М., 1994

[12] Всемирный банк. На пороге 21 века. Доклад о мировом развитии 1999/2000 М., 2000

Տ.Ֆորեստերի համակարգի, կյանքի որակը կարելի է որոշել 4 ինտեգրալ ցուցանիշների միջոցով ստրեսային իրադրությունների և ընդհանրապես կյանքի դժվարությունների մակարդակի, շրջակա միջավայրի աղտոտվածության աստիճանի, բնակչության կուտակման աստիճանի և սննդի ու առողջության որակի:

Ընդհանրապես, մի քանի ինտեգրալ ցուցանիշներով կյանքի որակի գնահատումը մեր կարծիքով, ընդունելի չէ, որովհետև այստեղ անտեսվում են մարդկանց կյանքի բոլոր կողմերը, նպատակ չկա մարդու պահանջմունքների համակարգը հնարավորինս մանրամասն արտահայտելու: Սակայն, կան համակարգեր, որոնք կյանքի որակը արտահայտում են ոչ միայն սակավաթիվ ցուցանիշներով, այլ նրանք չունեն ինտեգրալ բնույթ ունեցող ցուցանիշներ:

Մեր կարծիքով կյանքի որակի ցուցանիշների մշակման ժամանակ ամենագլխավորը մարդու (հասարակության) պահանջմունքները առավելագույնս ամբողջական և մանրամասն արտահայտող համակարգի մշակման և կիրառման խնդիրն է: Այդ պատճառով առանձին քննարկման է արժանի պահանջմունքների համակարգի ընդունման հարցը: Պահանջմունքները օրգանիզմի, մարդկային անձնավորության սոցիալական խմբերի, ընդհանրապես հասարակության զարգացման և կենսագործունեության պահպանման համար անհրաժեշտ ինչ-որ բանի պահանջը (պահանջարկը) կամ անբավարարվածությունն է[13] :

Հասարակական պահանջմունքները համակարգայնորեն յուրաքանչյուր անձի անձնական պահանջմունքների քանակական գումարը չեն. Բայց որակապես դրանք նույն պահանջմունքներն են և նրանց միմյանցից անջատելը նպատակահարմար չէ և մեթոդաբանորեն չարդարացված: ՈՒստի, կարելի է հենվել մարդկանց պահանջմունքների համակարգերի բազմատարբերակային ցանցի մեջ առավև ինտեգրացիոն բնույթ ունեցող համակարգի վրա հասարակության պահանջմունքների մասին պատկերացում կազմելու, հետևապես կյանքի որակի ցուցանիշների ընտրություն կատարելու համար:

[13] Философский энциклопедический словарь. М., 1989

Ընդհանրացնելով վերը շարադրվածը պետք է նշել, որ հեղինակների մոտ միանշանակ մոտեցում չկա «կյանքի որակի», նրա բաղադրիչների, մարդու (հասարակության) տարբեր պահանջմունքների որակակն մակարդակն արտահայտող ինդիկատորների առավել ամբողջական համակարգի մշակման մեխանիզմների մասին: Ինդիկատորների մշակման ժամանակ բացակայում է պահանջմունքներին համապատասխան ինդիկատորների ընտրության շեշտադրման անհրաժեշտության գիտակցումը: Ուստի արդիական է թե կյանքի որակի ինդիկատորների մշակման համար մարդու (հասարակության) պահանջմունքները առավելագույնս ամբողջական և մանրամասն արտահայտող համակարգի մշակման և կիրառման, թե այդ համակարգի հիմքի վրա ինդիկատորների մշակման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակման խնդիրը:

Սոցիալական և տնտեսական գնահատման զարգացման պատմությունը կարելի է բաժանել մի քանի ժամանակահատվածների.

1. 1940-ական թվականների վերջերից մինչև 1960-ական թվականների սկիզբները, գերակշռում էր այն գաղափարը, որ հասարակության առաջընթացը կախված էտնտեսական աճից, ըստ այդմ սոցիալական չափանիշների փոխարեն օգտագործվում էին արժեքային և այլ ցուցանիշներ: 1960-ական թվականների սկզբից գերիշխող դարձավ այն կարծիքը, որ միայն տնտեսական ցուցանիշները ի վիճակի չեն արտացոլել և ցույց տալ հասարակական կյանքի բոլոր կողմերը (երևույթները ու գործընթացները):

2. 1970-1990 թվականներ, երբ խնդիր դրվեց մշակել սոցիալական ցուցանիշների համալիր, որտեղ գերիշխող դարձավ կյանքի որակի սոցիալական չափանիշների մշակումը և պետական սոցիալական ծրագրավորման բնագավառի ընդլայնումը:

3. 1990-ական թվականներից մինչև մեր օրերը, որը պայմանավորված է աշխարհում արմատական փոփոխություններով, սոցիալ-տնտեսական կյանքի կարգավորման ու կազմակերպման հարցերի նկատմամբ մեծ ուշադրությամբ, բարեկեցության բարձրացման և կյանքի որակի բարելավման հիմնախնդիրներով:

Բնակչության կյանքի որակի հետազոտումը ենթադրում է չափանշային գնահատումների համակարգի լրացումը գիտական հիմնավորումներով պլանավորվող և կազմակերպվող դիտարկումներով, տվյալների հավաքումով և վերլուծությամբ:

Կյանքի որակի հասկացությունը կարող է մեկնաբանվել բազմաթիվ ցուցանիշներով, որոնք կբնութագրեն այն կամ լրիվությամբ, կամ էլ դրա առանձին տարրերը: Համապատասխան ցուցանիշներն են[14].

1. Առողջություն

- առողջ կենսակերպ վարելու հնարավորությունը կենսացիկլի բոլոր փուլերում,
- առանձին անձանց առողջության վատացման ազդեցությունը

2. Անհատական զարգացումը կրթման միջոցով

- երեխաների կողմից հիմնական գիտելիքների, փորձի և այն արժեքների ձեռքբերումը, որն անհրաժեշտ է նրանց անհատական զարգացման և որպես հասարակության անդամ հաջող գործնեության համար,
- ինքնակրթման շարունակման հնարավորությունը և այդ ունակությունն օգտագործելու կարողությունը
- ահատների կողմից իրենց գիտելիքները և փորձը զարգացնելը և օգտագործելը , որն անհրաժեշտ է նրանց տնտեսական պոտենցիալն իրացնելու համար և ցանկության դեպքում տալիս է հնարավորություն ինտեգրվելու տնտեսական գործընթացներին
- անհատների մշակութային կարողությունների պահպանումը և զարգացումը, որպեսզի նրանք ունենան իրենց ներդրումը տարբեր սոցիալական խմբերի անդամների բարեկեցության ապահովման գործում:

3. Զբաղվածությունը և աշխատանքային կյանքի որակը

- շահավետ աշխատանքի առկայությունը,
- աշխատանքային գործնեության բնույթը
- անհատի բավարարվածությունն իր աշխատանքային կյանքից

---

[14] Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006, էջ 36

4. Ժամանակ և հանգիստ

- իր ժամանցի ընտրության հնարավորությունը

5. Ապրանքների ձեռքբերման և ծառայությունների օգտագործման հնարավորությունը

- ապրանքների ձեռքբերման և ծառայությունների օգտագործման անհատական հնարավորությունը
- մարդկանց թիվը, ովքեր նյութապես անապահով են
- ապրանքների և ծառայությունների բաշխման հավասարության աստիճանը
- այն ապրանքների և ծառայությունների որակը , ընտրության հնարավորությունը և հասանելիությունը, որոնք արտադրվում են մասնավոր և հասարակական հատվածներում
- անհատների և նրանց ընտանիքների պաշտպանությունը տնտեսական դժվարություններ առաջանալիս:

6. Անձնական անվտանգությունը և իրավական մարմինները

- անհատի նկատմամբ բռնությունը, հետապնդումը և նրան անհանգստացնելը
- իրավական մարմինների արդարացիությունը և մարդասիրությունը
- իրավական մարմինների նկատմամբ անհատների վստահության աստիճանը

7. Սոցիալական հնարավորություններ և սոցիալական ակտիվություն

- հասարակական կյանքում, այս կամ այն հասարակական ինստիտուտներում և որոշումների կայացման ժամանակ անհատի մասնակցության հնարավորությունը :

Գոյություն ունեն կյանքի որակի իմացության 2 մոտեցում՝ ինտեգրալ և մասնակի: Ինտեգրալ մոտեցումը ենթադրում է 2 տիպի գնահատում՝ օբյեկտիվ (պաշտոնական վիճակագրական տեղեկատվության վրա հիմնված առանց ներառելու հասարակական տարբեր տիպի հարցումներից ստացվող տվյալները) և սուբյեկտիվ (հիմնված հասարակության կարծիքի վրա):

Բնակչության առողջությունը որպես կանոն տնտեսության արդյունքային գործնեության հիմնական չափանիշներից է, դրա դերը ամրապնդվում է կապված.

1. մարդկային գործոնի դերի բարձրացումը տնտեսությունում, որտեղ առողջությունը աշխատանքային ռեսուրսների հիմնական բնութագրերից է,

նկարագրում է նյութական և հոգևոր բարիքների արտադրության մեջ օգտագործվող աշխատուժի որակը,

2. արտադրությունում հասարակության ուղղակի և անուղղակի ծախսերի աճը, որտեղ բնակչության առողջությունը տնտեսության բազմաթիվ ճյուղերի աշխատանքի արդյունք է և առարկա,

3. բնակչության բարեկեցության քանակական գնահատման անհրաժեշտություն, որի գնահատման ժամանակ առողջությունը հանդես է գալիս և որպես սպառողական բարիք, և դրա հիմնական բաղկացուցիչ:

Վերլուծելով բնակչության կյանքի որակի հասկացության էության առկա մոտեցումները կազմվել է այն կարծիքը, որ կյանքի որակի ամբողջական պատկերը կարելի է տալ համապատասխան չափանիշները միավորելով 2 խմբերում: Առաջին խումբը կազմում է այն գնահատականները, որոնք հիմնված են վիճակագրական տեղեկատվության վրա: Որոշակի պայմանականությամբ այս չափանիշները կարելի է անվանել օբյեկտիվ: Երկրորդ խումբը լրիվությամբ բաղկացած է այն գնահատա-կաններից, որոնք հիմնված են բնակչության սոցոլոգիական հարցումների վրա, որոնց ժամանակ հարցվողներին խնդրվում է արտահայտել նրանց կարծիքը կյանքի այս կամ այն կողմի վերաբերյալ, այդ պատճառով բավարար հիմնավոր ենք դրանք սուբյեկտիվ համարել:

Հիմնական նյութական պահանջմունքները բավարարված են այն աստիճան, որ արդեն գալիս է « ձևափոխված անհատականացված պահանջմունքների բավարարման փուլը. Առաջին պլան է մղվում հոգևոր և էսթետիկ պահանջմունքները:

• Երկրում ձևավորվել է բավարար մակարդակի միջին դաս, որն իր մեջ ներառում է ազգի ինտելեկտուալ հատվածի նշանակալի մասը և որի բարեկեցությունը կասկած չի հարուցում:

• Կյանքի որակը գնահատող մարդը ունի այլընտրանքային տարբերակների օգտագործման որոշակի փորձ: Հետազոտություններից պարզ է, որ ընտանիքը կամ առանձին անհատը ինչքան քիչ համեմատման տարբերակներ ունեն, այնքան ավել ցածր են գնահատում կյանքի որակը:

• Երկրում հասարակական-քաղաքական կայունություն, կայուն տնտեսական աճ:

Ներկայումս զարգացող երկրների իրական վիճակը չի համապատասխանում նշված պայմաններից և ոչ մեկին: Այդ պատճառով այսպիսի երկրներում բնակչության կյանքի որակի ուսումնասիրման ներկա փուլում պետք է գերակշռի այն մոտեցումը,որը որոշակի պայմանականությամբ կարելի է անվանել օբյեկտիվ: Կյանքի որակի չափանիշները և գնահատականները պետք է հիմնվեն ցուցանիշների այն համակարգի վրա, որը օբյեկտիվորեն արտացոլում սոցիալ-տնտեսական վիճակը:

1.3. Բնակչության եկամտի կամ սպառման, բաշխման մեթոդաբանական արդի հիմանահարցերը

Եկամուտների անհավասարությունն ընդհանրապես բնութա•րական է բոլոր տնտեսական համակարգերի համար: Եկամուտների վերաբաշխման շուկայական մեխանիզմը և նույնիսկ դրանց կենտրոնացված կարգավորումը չեն կարող վերացնել այդ անհավասարությունը, որովհետև եկամուտների հավասարարական բաշխումը ինքնին ոչ թե սոցիալական արդարության է հանգեցնում, այլ, ընդհակառակը, թուլացնում է աշխատանքի խթաններն ու բարձր արտադրողականություն ապահովելու շահագրգռվածությունը: Սակայն շուկայական հարաբերություններին անցնելու պայմաններում շատերն են տուժում եկամուտների բաշխման ծայրահեղ դրսևորումներից: Մի կողմից ճոխությունը, մյուս կողմից, հարատև չքավորությունը առավելապես շուկայական տնտեսությանը բնորոշ հատկանիշներ են:

Գոյություն ունեն որոշակի գործոններ, որոնք հանգեցնում են հասարակության եկամուտների անհավասարության առաջացմանը.

1. **Ընդունակությունների տարբերությունները:** Մարդկանց ինտելեկտուալ, ֆիզիկական, մտավոր, գեղագիտական ընդունակությունները տարբեր են, հետևեաբար անխուսափելի է նրանց վաստակած եկամուտների տարբերակվածությունը:

2. **Կրթությունը և ուսուցումը:** Մարդիկ իրենց ձեռք բերած կրթությամբ և մասնագիտական պատրաստվածությամբ իրարից խիստ տարբերվում են, հետևապես տարբեր է նաև նրանց վաստակը:

3. **Մասնագիտական ճաշակը և ռիսկը:** Ելնելով մասնագիտական ճաշակի տարբերություններից, եկամուտները կարող են լինել տարբեր: Մարդիկ, ովքեր

պատրաստ են կատարել ծանր, հոգնեցուցիչ աշխատանք, լարված աշխատել, նրանք ստանում են բարձր աշխատավարձ: Որոշ մարդիկ էլ, ձգտելով բարձր եկամուտների, դիմում են տնտեսական ռիսկի իրենց ֆինանսական միջոցները կիրառելով բիզնեսի որևէ բնագավառում:

4. **Սեփականության տիրապետությունը:** Տնային տնտեսատերերի ճնշող մեծամասնությունն ունի շատ փոքր մասնավոր սեփականություն կամ զուրկ է դրանից, իսկ մնացած փոքր մասը տիրապետում է մեծ քանակությամբ ֆիզիկական և դրամական կապիտալի: Շուկայական տնտեսության պայմաններում, հատկապես սեփականությունից ստացված եկամուտներն են որոշում տնտեսատերերի վիճակը եկամուտների բուրգի ամենաբարձր մասում: Այն փաստը, որ «հարստությունն է ծնում հարստություն», ավելի է ուժեղացնում եկամուտների բաշխման անհավասարության մեխանիզմը[15]:

Աղքատության կրճատման հիմնական աղբյուրը, մակրոտնտեսական տեսանկյունից, պետք է հանդիսանա աղքատությանն ուղղված տնտեսական աճը և եկամուտների նպատակային վերաբաշխումը: Դա ենթադրում է, որ աղքատության հաղթահարման համար անհրաժեշտ է եկամուտների ստեղծման գործընթացում աղքատների առավելագույն ներգրավում, ինչը կնպաստի եկամուտների առաջնային բաշխման գործընթացի բարելավմանը, իսկ եկամուտների վերաբաշխման ֆունկցիան, իր հերթին, պետք է ունենա ընդգծված սոցիալական ուղղվածություն: Վերջինիս առնչությամբ պետք է նշել, որ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների եկամուտների մակարդակը էապես պայմանավորված է պետական տրանսֆերտների փոքր չափերով:

Ակնհայտ է, որ աղքատների կողմից տնօրինվող հիմնական ռեսուրսը մարդկային կապիտալն է, քանի որ բնակչության այդ խմբի մոտ ֆինանսական և նյութական ակտիվները սակավ են: Ուստի, եկամուտների առաջնային բաշխման ընթացքում աղքատների մասնակցության ապահովումը հնարավոր է միայն մարդկային կապիտալի արժեքավորման և դրա գործադրումն ընդլայնելու ճանապարհով: Այս իմաստով

[15] Рынок труда и социальная политика в Центральной и Восточной Европе. Переходный период и дальнейшее развитие. Под ред. Н. Барра. М., 1997, с. 95

կարևորվում են քաղաքականության սոցիալական և կառուցվածքային բաղադրիչները, որոնք մի կողմից պետք է նպաստեն մարդկային ռեսուրսի պահպանմանն ու զարգացմանը (առողջապահության և կրթության հասանելության ապահովում), իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր ապահովեն այդ կապիտալի առավելագույնս հնարավոր և արդյունավետ կիրառման համար: Վերջինս ենթադրում է աշխատուժի որակավորման, փոքր և միջին ձեռներեցության աջակցության, բիզնեսի ենթակառույցների զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում:

Աղքատության հիմնախնդրի լուծումն էապես պայմանավորված է եկամուտների վերաբաշխման բարելավմամբ և նպատակային վերաբաշխմամբ, ինչը պետք է իրականացվի, նախ և առաջ, տնտեսության «ֆորմալ հատվածի» ընդլայնման և ստեղծված եկամուտների վերաբաշխման ճանապարհով: Ստվերային տնտեսության ազդեցությունը եկամուտների բաշխման վրա երկակի է. մի կողմից պետությունը մասամբ զրկվում է եկամուտների վերաբաշխման և սոցիալական ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունից, իսկ մյուս կողմից՝ ստվերային տնտեսությունում տեղի է ունենում թաքնված եկամուտների ոչ ֆորմալ վերաբաշխում, որն էլ աղճատում է աղքատության և անհավասարության իրական պատկերը: Պետության կողմից անհրաժեշտ միջոցառումների չիրականացման դեպքում տնտեսության ստվերային հատվածը հակում ունի աճելու, և քանի որ այն ավելի մրցունակ է, կարող է շուկայից դուրս մղել տնտեսության «ֆորմալ հատվածում» գործող ձեռնարկություններին:

Այսպիսով, տնտեսության ստվերայնության կրճատմանը և «ֆորմալ հատվածի» ընդլայնմանն ուղղված ծրագրերը խիստ կարևոր են ինչպես եկամուտների վերաբաշխման, այնպես էլ ձեռնարկությունների զարգացման առումով: Հետևաբար, առանցքային նշանակություն են ստանում հակակոռուպցիոն քաղաքականությունը, ազատ մրցակցության պաշտպանության քաղաքականությունը, հարկային համակարգի ընդգծված պրոգրեսիվությունը և ՀՆԱ վերաբաշխման մեխանիզմների կատարելագործումը:

Հայաստանում աղքատության կրճատման համար տնտեսական աճը բավարար չէ և կառավարությունը տնտեսական քաղաքականության նպատակ պետք է սահմանի եկամուտների բաշխման անհավասարության կրճատումը: Սա նշանակում է, որ

քաղաքականությունը նպատակաուղղվելու է այնպիսի տնտեսական աճի ապահովմանը, որը կհանդիսանա վերաբաշխման և անհավասարության կրճատման աղբյուր և կապահովի աղքատների եկամուտների աճը:

Կյանքի որակի ինդեքսներն ընդհանրացված գնահատականներ են, որոնք արտացոլում են մարդկանց բավարարվածությունը իրենց կյանքի որակը պայմանավորող կենսապայմաններից: Հայաստանի հասարակությունում կյանքի որակի ինդեքսները երեք մակարդակում՝ հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի:

- Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը և դրա բաղադրիչ ենթաինդեքսներն արտահայտում են Հայաստանի բնակչության բավարարվածությունը հանրապետական մակարդակում կյանքի որակը բնութագրող կենսապայմաններից:
- Համայնքի մակարդակում կյանքի որակի ինդեքսը արտահայտում է Հայաստանի բնակչության բավարարվածությունը համայնքային մակարդակում կյանքի որակը բնութագրող կենսապայմաններից:
- Ընտանիքի/անձի մակարդակում կյանքի որակի ինդեքսը և դրա ենթաինդեքսներն արտահայտում են Հայաստանի բնակչության բավարարվածությունը ընտանիքի կամ անձի մակարդակում կյանքի որակը պայմանավորող կենսապայմաններից[16]:

Կյանքի որակի հետազոտությունում հաշվարկվել են կյանքի որակի 3 հիմնական ինդեքս և դրանց 10 բաղադրիչ ենթաինդեքսներ: Դրանք են.

1. Կյանքի որակի ինդեքսը հանրապետական մակարդակում և դրա չորս բաղադրիչ ենթաինդեքս՝ տնտեսական, սոցիալական, ենթակառուցվածքային, կառավարման ոլորտներում:

2. Կյանքի որակի ինդեքսը համայնքային մակարդակում:

3. Կյանքի որակի ինդեքսն անձի/ընտանեկան մակարդակում, որն ունի հինգ ենթաինդեքս՝ բարեկեցության, ապահովության, հեղինակության, ինքնաիրակա-նացման, ժամանցի ոլորտներում:

---

[16] Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2016, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16: Վերջնական զեկույց FR-22arm/17, Եր., 2017, էջ 12-18

Ինդեքսների արժեքները տվյալ անձի համար կարող են գտնվում են 0-100 միջակայքում:

Հանրապետական մակարդակի կյանքի որակի ինդեքսը 2016 թ. -ին կազմել է 34. 2, այն գտնվել է ցածր գնահատականների տիրույթում, սակայն բավական մոտ է միջին գնահատականների տիրույթի ներքին սահմանին՝ 40:

Համայնքային մակարդակի կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 69. 4՝ գտնվելով բարձր գնահատականների տիրույթում՝ 60, 80: Այն կրկնակի գերազանցել է հանրապետական մակարդակի ինդեքսին:

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը կազմել է 50,2՝ գտնվելով միջին գնահատականների տիրույթում՝ 40, 60, մոտ 1.5 անգամ գերազանցելով հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը:

Ինդեքսների արժեքների ստացված պրոֆիլը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ: Հայաստանի հասարակությունը, որպես ամբողջություն, իր անձի/ընտանիքի կյանքի որակն ընկալում է որպես «միջին մակարդակում գտնվող»: Այն, ինչ մարդիկ իրենց շուրջ տեսնում են և անմիջականորեն ընկալում, այլ կերպ՝ համայնքային ենթակառուցվածքները, որոնցից մարդիկ անմիջականորեն օգտվում են, նրանք բարձր են գնահատում, իսկ այն, ինչ իրենցից «հեռու» է և ինչի մասին նրանք տեղեկանում են ոչ անմիջականորեն (հիմնականում ինֆորմացիոն դաշտից) գնահատում են ցածր:

Գծապատկեր 2

Հանրապետական, համայնքային և անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսների դինամիկան, 2012-2016 թթ. [17]



2012-2016 թթ. ընթացքում հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսը միշտ եղել է ամենացածրը՝ նվազելով 39. 5-ից մինչև 34. 2, համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսը եղել է ամենաբարձրը և 2013-2016 թթ. ընթացքում մոնոտոն աճել է 58. 1-ից՝ 69. 4, իսկ անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի արժեքը գտնվել է հանրապետական և համայնքային մակարդակի ինդեքսների միջև և գծապատկեր 2-ում ներկայացված 5 տարիների ընթացքում տատանվել է 50 արժեքի շուրջը:

Հանրապետական մակարդակում կյանքի որակի ինդեքսի բաղադրիչներից ամենից ցածր արժեքներ ունեն տնտեսական բաղադրիչը՝ 21. 4 և կառավարման բաղադրիչը՝ 27. 1: Մի փոքր ավելի բարենպաստ է սոցիալական բաղադրիչը, որը չնայած գտնվում է ցածր գնահատականների տիրույթում՝ 36. 9, սակայն շատ մոտ է միջին

[17] Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2016, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16: Վերջնական զեկույց FR-22arm/17, Եր., 2017, էջ 8

գնահատականների տիրույթին: Բաղադրիչներից ամենաբարվոք վիճակում է ենթակառուցվածքների բաղադրիչը՝ 51. 3, որը գտնվում է միջին գնահատականների տիրույթում: Նշենք, որ այս արդյունքը հաղորդակցվում է համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսի բարձր արժեքի հետ, որը կազմավորվում է համայնքի մակարդակում ենթակառուցվածքների աշխատանքից բավարարվածության գնահատականներով[18]:

Անձի/ընտանիքի մակարդակում կյանքի որակի ինդեքսի հինգ բաղադրիչներից առավել բարձր արժեքներ ունեն ապահովության՝ 58.9 և հեղինակության՝ 60. 6 բաղադրիչները, համեմատաբար ցածր արժեքներ՝ բարեկեցության՝ 41. 7 և ժամանցի՝ 41.5 բաղադրիչները: Այդ երկու զույգերի միջև է գտնվում ինքնաիրականացման բաղադրիչը՝ 48.5: Համայնքային մակարդակում կյանքի որակի ինդեքսը ենթաինդեքսներ չունի:

Աղքատության հաղթահարման և բնակչության խոցելի շերտերի նվազման համար սոցիալ-տնտեսական հարաբերություններում իրականացվող միջոցառումները վերլուծելիս առանձնացվել են երեք տիպի երկրներ, որտեղ յուրովի են ներկայացվում այդ ծրագրերը:

Դրանք են.

առաջին խումբ՝ միջին եկամուտներ ունեցող, արագ վերափոխվող, մեծ ծախսեր կատարող և տարածաշրջանում աղքատության ամենացածր ցուցանիշներ ունեցող երկրներ, ***երկրորդ խումբ՝*** միջին եկամուտներ ունեցող դանդաղ վերափոխվող երկրներ, որտեղ աղքատության ցուցանիշները էականորեն բարձր են առաջին խմբի երկրների համեմատ, ***երրորդ խումբ՝*** ցածր եկամուտներ ունեցող, դանդաղ վերափոխվող, աղքատության բարձր ցուցանիշներ գրանցած երկրներ:

Զարգացող երկրներում սոցիալական ապահովության համակարգի վերափոխումները ընթանում են հետևյալ ուղղություններով՝ գործազրկության ժամանակավոր նպաստի տրամադրում, կենսաթոշակային տարիքի բարձրացում, սոցիալական աջակցության համակարգի, առողջապահության ֆինանսավորման խառը համակարգի ներդրում, ընտանեկան նպաստների համակարգի բարելավում:

---

[18] Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2016, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16: Վերջնական զեկույց FR-22arm/17, Եր., 2017, էջ 12-18

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ

2.1. Բնակչության դրամական եկամուտները և աղքատության հաղթահարումը

Բնակչության բարեկեցության և կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է հանդիսանում աղքատության մակարդակը տվյալ երկրում: Աղքատ են գնահատվել այն անձինք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված՝ ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Աղքատության սահմանումները հիմնված են աղքատության որպես բազմաչափ երևույթի հասկացության վրա: Ըստ Համաշխարհային բանկի աղքատությունը արտահայտվում է որպես.

- եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ, արտադրական և անձնական գույքի բացակայություն կամ անբավարարություն, սոցիալական կապիտակի ցածր մակարդակ.
- սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն, անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հանրավորություններ.
- անվտանգության ցածր մակարդակ, տարբեր ռիսկերից պաշտպանվածության ցածր աստիճան.
- ազդեցության ցածր մակարդակ տնտեսական և հասարակական, ազդեցություն ունեցող կառույցների գործունեությանը մասնակցության, դրանց որոշումների վրա ազդելու հնարավորությունների պակաս[19]:

Կարիքը կյանքի անբաժանելի մասն է դարձել ոչ միայն կենսաթոշակառուների, հաշմանդամների, փախստականների, այլ նաև շատ մարդկանց համար, ովքեր գործազուրկ են դարձել տնտեսական անկման, տնտեսության մեջ կառուցվածքային

[19] Рынок труда и социальная политика в Центральнойи Восточной Европе, Москва 1997, с. 32.

փոփոխությունների հետևանքով, ինչպես նաև հարկադրված անվճար արձակուրդի մեջ գտնվողների, թերզբաղվածների, բյուջետային հիմնարկների աշխատողների համար:

Ովքեր են աղքատները: Այս հարցին միանշանակ պատասխան տալ դժվար է, քանզի դա կախված է նրանից, թե ինչ մեթոդիկայից ենք օգտվում: Աղքատության աստիճանի որոշման չափանիշն ըստ Համաշխարհային բանկի մեկ անձի հաշվով օրական մեկ ամերիկյան դոլարից պակաս ընթացիկ ծախսերն են:

Աղքատության հասկացությունը կապված է ոչ միայն մարդու գոյության համար անհրաժեշտ պայմանների (սնունդ, հագուստ, բնակարան), այլ նաև կյանքի որակը որոշող պայմանների (առողջություն, կյանքի տևողություն և այլն) հետ:

Աղքատության տակ հասկացվում է կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարությունը: Պատահական չէ, որ 1990թ. UNDP-ի կողմից սկսեց կիրառվել մարդկային զարգացման մակարդակի գնահատումը: Մոտեցումը հիմնված է այն գաղափարի վրա, որ մարդուն բացի նյութական ապահովությունից անհրաժեշտ են երկարատև և առողջ կյանք, կրթություն, իրավունքների պաշտպանվածություն, աշխատանք, կացարան, հասարակական հարգանք և այլ իրական և հոգեբանական բարիքներ, որոնց մատչելիությունը հաճախ պայմանավորված չէ փողով:

Բնակչության կենսամակարդակի կտրուկ անկումը և շերտավորման աճը տնտեսական վերափոխումների ուղեկից դարձան բոլոր հետհամայնավարական երկրներում. մի բևեռում հայտնվեց սեփականության վերափոխումների արդյունքում ի հայտ եկած նոր սեփականատերերի խավը, մյուս բևեռում՝ աղքատացած բնակչությունը: Պետք է նշել, որ նման անցումային գծերը բնորոշ են սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր կողմերին, այդ թվում՝ բաշխման հարաբերություններին և բնակչության կենսամակարդակի շերտավորմանը: Բաշխման համակարգում տեղի ունեցած հիմնական փոփոխություններից կարելի է համարել գործունեության նոր տեսակի և նոր ոլորտների ծագումը, եկամուտների հնարավոր նոր աղբյուրների և կառուցվածքի ձևավորումը, գործատուների և վարձու աշխատողների միջև նոր հարաբերությունների ի հայտ գալը և այլն: Բնակչության կենսամակարդակի շերտավորման աճին նպաստեցին բազմաթիվ գործոններ, որոնցից են.

1. **Սեփականության վերափոխման գործընթացը:** Այն իրականացվեց բնակչության անհավասար ելակետային հնարավորությունների պայմաններում, որտեղ էական դեր խաղաց նախկին համակարգում բնակչության արդեն ձևավորված սոցիալական շերտավորումը՝ անհրաժեշտ տեղեկատվության և ֆինանսական միջոցների մենաշնորհացման տեսանկյունից:

2. **Անկատար մրցակցությունը:** Անհավասար է բաշխված ոչ միայն նյութական, այլ նաև մարդկային կապիտալը, որն ավելի է խորանում կրթական համակարգի վճարովի դառնալով: Օրենսդրության անկատարության պատճառով հարկային դաշտում տնտեսավարող սուբյեկտները գործում են անհավասար պայմաններում, բարձր է կոռուպցիայի մակարդակը, հատկապես երկարաժամկետ վարկերը մատչելի չեն փոքր և միջին գործարարության համար, որն այսօր գերակայում է Հայաստանի տնտեսությունում:

3. **Տնտեսության անկումը և սղաճը,** լրավճարների վերացումը, սոցիալական ծախսերի կրճատումը, ֆիզիկական անձանց վրա ընկնող հարկային բեռի ուժեղացումը, որոնք հանգեցրին բնակչության մի ստվար հատվածի իրական եկամուտների նվազեցմանը:

4. **Աշխատավարձի դեցիլային գործակցի աճը,** վարձու աշխատողների և սեփականատերերի եկամուտների միջև, նաև գործարարների եկամուտների միջև խզման խորացումը:

5. **Շուկայական պայմաններին բնակչության** դանդաղ հարմարվելը, պլանային տնտեսությունից ժառանգություն մնացած պետության հանդեպ խնամառուական հոգեբանությունը[20]:

Ըստ բարեկեցության մակարդակի երկրի բնակչությունը բաժանվել է երեք խմբերի:

Ոչ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը (սպառման ագրեգատը) մեկ շնչի հաշվով բարձր են կենսամակարդակը գնահատող նվազագույն մեծությունից (այստեղ՝ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից):

---

[20] Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում, Եր., «Տիգրան Մեծ», 2003, էջ 25:

Աղքատ է համարվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը մեկ շնչի հաշվով ցածր են կենսամակարդակը գնահատող նվազագույն մեծությունից, սակայն բարձր են աղքատության պարենային գծից (այստեղ՝ նվազագույն պարենային զամբյուղի արժեքից):

Շատ աղքատ է գնահատվում բնակչության այն մասը, որի ամսական ծախսերը (սպառողական ագրեգատը) մեկ շնչի հաշվով ցածր են աղքատության պարենային գծից: Աղքատ բնակչության տոկոսի ցուցանիշը կենսամակարդակի գնահատման առավել հայտնի, հեշտ կիրառելի և դյուրին ըմբռնելի ցուցանիշ է:

Աղքատության խորությունը ցույց է տալիս, թե որքան հեռու է գտնվում աղքատության գծից տնային տնտեսությունը (բնակչությունը): Այն արտացոլում է միջին սպառման ագրեգատի (կամ եկամտի) դեֆիցիտը աղքատության գծի նկատմամբ՝ ողջ բնակչության համար: Երբ այն հաշվարկվում է միայն աղքատ բնակչության համար, ապա ցույց է տալիս աղքատության դեֆիցիտը, այսինքն՝ որքան է կազմում աղքատ բնակչության միջին սպառման դեֆիցիտը աղքատության գծին հասնելու համար՝ տոկոսներով աղքատության գծի նկատմամբ: Այդ դեֆիցիտը բազմապատկելով աղքատ բնակչության թվաքանակով (որը սովորաբար արտահայտվում է որպես ՀՆԱ տոկոս)՝ ստանում ենք այն նվազագույն ծախսը, որն անհրաժեշտ է երկրում աղքատությունը հաղթահարելու համար՝ ենթադրելով սոցիալական աջակցության տրամադրման կատարյալ հասցեականություն:

Աղքատության սրությունը (միջին քառակուսային աղքատության խորություն) ցույց է տալիս աղքատ բնակչության միջև անհավասարությունը:

Եթե սոցիալական աջակցությունն ուղղվում է աղքատներին՝ այս գործակիցը նվազում է, և հակառակը:

Աղքատների համամասնության, աղքատության խորության և սրության ցուցանիշները դասվում են Ֆոստեր-Գրիեր-Տորբեկե ցուցանիշների խմբին[21]:

Տնային տնտեսության եկամուտը հանդիսանում է բնակչության կենսամակարդակը գնահատող կարևորագույն ցուցանիշներից մեկը:

[21] Джеймс Вулфенсон, Франсуа Бургиньон, «Развитие и сокращение масштабов бедности: оглядываясь в прошлое, заглядывая в будущее», Всемирный банк, октябрь 2004г

Տնային տնտեսության ամբողջական եկամուտը կազմված է դրամական եկամուտների բոլոր բաղադրիչներից և այնպիսի ոչ դրամական եկամուտների բաղադրիչներից, ինչպիսիք են՝ տնային տնտեսության կողմից սպառվող (օգտագործվող), սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքը՝ դրամով արտահայտված, ինչպես նաև բարեկամներից կամ այլ անձանցից անվճար ստացված ոչ պարենային ապրանքները և ծառայությունները:

Տնային տնտեսության դրամական եկամուտներն իրենց մեջ ներառում են՝ տնային տնտեսության անդամների կողմից իբրև աշխատանքի վարձատրություն ստացված

գումարները (չեն հաշվառվում եկամտահարկը և աշխատավարձից այլ պարտադիր սոցիալական վճարումները), ինքնազբաղվածության արդյունքում կամ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները, սոցիալական տրանսֆերտները (կենսաթոշակները, դրամական սոցիալական աջակցությունը, ներառյալ գործազրկության նպաստը, ընտանեկան նպաստը, երեխայի ծննդյան և խնամքի նպաստները և այլ նպաստներ), մասնավոր տրանսֆերտները, վարձակալության տրված սեփականության դիմաց վարձավճարները, տոկոսավճարները, դիվիդենտները, շահաբաժինները, բաժնետոմսերի և այլ արժեթղթերի վաճառքից ստացված գումարները, անշարժ գույքի և տան ունեցվածքի, գյուղատնտեսական կենդանիների, սեփական տնտեսությունից ստացված մթերքի վաճառքի գումարները, կրթաթոշակների, ինչպես նաև բարեկամների և այլ անձանց կողմից տրամադրված օժանդակության կամ այլ դրամական եկամուտների տեսքով ստացված գումարները:

Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով դրամական անվանական եկամուտների չափն ու կառուցվածքը 2008-2009թթ. և 2015-2016թթ. ժամանակահատվածների համար բերված է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Հայաստան. Տնային տնտեսությունների անվանական եկամուտների տեսակները, 2008-2009, 2015-2016թթ.[22]

	Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով, միջին ամսական							
	Դրամ				%			
	2008	2009	2015	2016	2008	2009	2015	2016
1.Դրամական եկամուտներ	26 866	28 038	52 377	56 544	90.8	91.8	94.7	94.7
այդ թվում՝ վարձու աշխատանք	14 491	15 328	28 800	31 420	49.0	50.2	52.1	52.6
ինքնազբաղվածություն	2 385	1 534	4 842	5 573	8.1	5.0	8.8	9.3
գյուղմթերքի և կենդանիների վաճառք	1 771	1 667	2 674	2 955	6.0	5.5	4.8	5.0
սեփականություն (վարձակալության վճարներ, տոկոսավճարներ, շահաբաժիններ)	35	25	115	122	0.1	0.1	0.2	0.2
պետական թոշակներ և նպաստներ	4 870	5 615	9 284	9 569	16.5	18.4	16.7	16.0
տրանսֆերտներ	2 692	2 669	4 698	4 932	9.1	8.7	8.5	8.3
2.Ոչ դրամական եկամուտներ	2 710	2 503	2 932	3 146	9.2	8.2	5.3	5.3
սննդամթերքի սպառում սեփական տնտեսությունից	2 426	2 230	2 660	2 841	8.2	7.3	4.8	4.8
Ընդամենը ամբողջական եկամուտ	29 576	30 541	55 309	59 690	100	100	100	100

Ինչպես վկայում են Աղյուսակ 1-ի տվյալները, 2008-2016թթ.-ի ընթացքում ամբողջական եկամուտների կազմում դրամական եկամուտների մասնաբաժինն աճել է, իսկ ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը նվազել է:

Դիտարկելով տնային տնտեսությունների եկամուտների աղբյուրներն ըստ բնակավայրերի՝ ակնհայտ է դառնում, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտների կարևորությունը մեծ է հատկապես քաղաքաբնակների համար, որտեղ այն 2016թ.-ին կազմել է ամբողջական եկամուտների 60.3%: Գյուղաբնակ տնային տնտեսություններում վարձու աշխատանքից ստացված եկամուտների մասնաբաժինը

[22]Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

1.7 անգամ ցածր է քաղաքայինից և կազմել է ամբողջական եկամուտների 36.2%: Ինչ վերաբերում է ինքնազբաղվածությունից ստացված եկամուտների մասնաբաժնին, ապա քաղաքային բնակավայրերում 2008-2016թթ.-ի ժամանակահատվածում այն աճել է՝ 9.9%-ից՝ 10.3%, իսկ գյուղաբնակ տնային տնտեսություններում՝ 4.1%-ից՝ 7.2%: 2016թ.-ին 2008թ.-ի համեմատ նվազել է գյուղաբնակների եկամուտների մասնաբաժինը գյուղմթերքի և կենդանիների վաճառքից (17.6%-ից՝ 14.6%):

Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար ոչ դրամական եկամուտների մասնաբաժինն անհամեմատ բարձր է քաղաքաբնակների համեմատ, հատկապես սեփական տնտեսությունից ստացված սննդամթերքի տեսքով, չնայած նրան, որ 2008թ.-ի համեմատ այն նվազել է: Ոչ դրամական եկամուտների մասնաբաժինը 2016թ.-ին կազմել է գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտների 12.2%-ը, այն դեպքում, երբ քաղաքաբնակների համար այն կազմել է միայն 2.1%: Միևնույն ժամանակ, քաղաքաբնակ տնային տնտեսությունների համար նվազել է և մասնավոր տրանսֆերտների մասնաբաժինը, իսկ գյուղաբնակ տնային տնտեսությունների համար այն չնչին ավելացել է (քաղաքաբնակներինը՝ 2008թ.-ի 9.9%-ից 2016թ.-ին կազմելով 8.2%, իսկ գյուղաբնակներինը՝ 2008թ.-ի 7.3%-ից 2016թ.-ին կազմելով 8.3%):

2016թ. աղքատության մակարդակը կազմել է 30.0%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.0 տոկոսային կետով: Ընդ որում, ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը նվազել է 0.4 տոկոսային կետով՝ կազմելով 2.3%: 2014թ. աղքատության խորությունը գնահատվել է 4.5%՝ 2013թ. 5.9%-ի համեմատ, իսկ աղքատության սրությունը գնահատվել է 1.3%՝ 2013թ. 1.7%-ի համեմատ: 2016թ. աղքատությունն ավելի բարձր է քաղաքային բնակչության շրջանում՝ գյուղականի համեմատ:

2016թ. Հայաստանում աղքատությունը նվազել է 0,4 տոկոսային կետով: Հայաստանում աղքատ է բնակչության 29,4% -ը, 1,8 %-ը՝ ծայրահեղ աղքատ է, 8,0%-ը՝ շատ աղքատ (առանց ծայրահեղ աղքատների), իսկ մնացած 19,6%-ը՝ ուղղակի աղքատ է:

2016թ. աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է մոտ 880 000 մարդ, նրանցից շատ աղքատների թվաքանակը (ներառյալ ծայրահեղ աղքատները)՝ մոտ 295 000, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ մոտ 54 000 մարդ: 2015թ . համեմատ աղքատության մակարդակը նվազել է 0,4 տոկոսային կետով: Սակայն

2016թ. ընդհանուր աղքատության մակարդակը դեռ ավելի բարձր է 2008թ. մակարդակից՝ 1,8 տոկոսային կետով:

ԱՎԾ մեթոդաբանության համաձայն, աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից (40 867 դրամ) շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին գծից (33 418 դրամ), իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից (23 313 դրամ):

Հայաստանում աղքատությունն ամենաբարձրն է Շիրակում (45,5 %) Լոռիում (35,8%), Տավուշում (33,8%): 2016թ. ընտանիքների անդամների 11,6%-ը նշել է, որ ունեն սննդի ապահովման խնդիր, 23,7%-ը՝ բնակարանային հիմնահարց, 3,1%-ը՝ երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու խնդիր:

Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի՝ 2016թ. իրեն աղքատ (ներառյալ ծայրահեղ աղքատ) է համարել բնակչության 16,6%-ը, իր կենսամակարդակը միջինից ցածր է գնահատել հարցվածների մոտ կեսը՝ 45,8%-ը, իսկ 2008թ. այդպես էր գնահատել 35,6%-ը:

Ընտանիքները նշել են, որ գոյատևման համար մեկ շնչին ամսական պետք է 120 523 դրամ, լավ ապրելու համար՝ 347 234 դրամ, շատ լավ ապրելու համար՝ 655 060 դրամ, սակայն կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ իրենց ակնկալիքների վերաբերյալ տնային տնտեսության 16 և բարձր տարիքի անդամների 39,6%-ը նշել է՝ ինձնից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է ապահովի աշխատանքով և լավ պայմաններով, 19,3%-ը նշել է, որ պլաններ չունի, իսկ 100 հարցվողից 12-ը նշել է, որ փնտրում է եկամտաբեր աշխատանք Հայաստանում, սեփական գործ Հայաստանում ցանկանում է սկսել միայն 1,1%-ը:

Բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշներից է Ջինի գործակիցը, որն իրենից ներկայացնում է բնակչության սպառման, եկամուտների և դրանց բաշխվածության անհավասարության գնահատման ցուցանիշը: 2016թ. Ջինի գործակիցը, ըստ եկամուտների, կազմել է 0.373 (2015թ. 0.372-ի դիմաց), իսկ ըստ սպառման՝ 0.277 (2015թ. 0.271-ի դիմաց): Դա վկայում է այն մասին, որ Հայաստանում

բնակչության անհավասարությունն ավելի խորն է ըստ եկամուտների ցուցանիշի՝ սպառման ցուցանիշի համեմատ:

Զեկույցում նշվում է, որ աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 63,2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1,2% կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Միջազգային փորձը, սակայն, վկայում է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում շատ ավելին են:

Հանրապետության բնակչության աղքատության հաղթահարման և եկամուտների բաշխման անհավասարության վերացման գործում սոցիալական քաղաքականության հիմնական գերակայությունները հետևյալն են՝

- **սոցիալական օժանդակության ոլորտում՝** ընտանեկան նպաստների նպատակայնության աճի ապահովումը և ամենաաղքատ բնակչության՝ հնարավորինս առավելագույն ներգրավումը համակարգի մեջ, ընտանեկան նպաստների չափերի ավելացումն այն հաշվարկով, որ հնարավոր լինի գերազանցել պարենային աղքատության գիծը,
- **սոցիալական ապահովագրության ոլորտում՝** արդյունավետության աճը, ապահովագրական բնույթ չկրող կենսաթոշակների վճարման տեղափոխումը պետական բյուջե, կենսաթոշակների չափերի աճն այն հաշվարկով, որ դրանք գերազանցեն ընդհանուր աղքատության գիծը, կենսաթոշակների տարբերակման աճը և աշխատանքային ստաժի վրա հիմնված կենսաթոշակային համակարգից անցման ապահովումն ապահովագրական վճարների ծավալով պայմանավորված կենսաթոշակային համակարգին:

Եկամտային քաղաքականության հիմնական գերակայությունները պետք է ուղղված լինեն բյուջետային և սոցիալական ենթակառուցվածքների ոլորտի ցածր վճարվող աշխատողների աշխատավարձերի առաջանցիկ աճի ապահովմանը այնպես, որ դրանք առնվազն երկու անգամ գերազանցեն աղքատության ընդհանուր գծի

մակարդակը, ինչպես նաև օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի համապատասխանեցմանը աղքատության ընդհանուր գծին:

Հաջորդ գերակայությունը պետության ֆինանսական կարողությունների աճն է՝ պայմանով, որ չխաթարվեն կայուն բարձր տեմպերով տնտեսական աճի հնարավորությունները: Այդ աճը կապահովվի հարկային մուտքերի (ՀՆԱ 0,3-0,4%-ի չափով տարեկան աճ՝ հիմնականում հարկային վարչարարության կատարելագործման և հարկային համակարգի պարզեցման արդյունքում), ինչպես նաև բյուջեի պակասուրդը անվտանգ սահմաններում ավելացնելու միջոցով: Աղքատության և անհավասարության հաղթահարման տեսակետից այդ աճն անհրաժեշտ է պետական ծախսերի մեջ սոցիալական ոլորտի ծախսերի ծավալների առաջանցիկ աճը ապահովելու համար:

Տնտեսական անվտանգության տեսակետից հաջորդ կարևոր գերակայությունը պետական ներդրումային ծրագրերի ծավալային աճն է և դրանց ուղղումը աղքատության (այդ թվում՝ մարդկային աղքատության) ու անհավասարության նվազեցման նպատակներին:

Տնտեսական անվտանգության տեսակետից կրթության բնագավառում առաջնային է համարվելու հանրակրթական ոլորտի հետագա զարգացումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ավագ դպրոցում ընդգրկվածության աստիճանի աճին: Հատուկ պետք է շեշտադրվեն մասնագիտական կրթության բնագավառում առկա մատչելիության հիմնախնդիրները: Համակարգի արդյունավետության բարձրացումը և պետական ծախսերի ծավալի ավելացումը դիտվում են որպես դրված նպատակներին հասնելու հիմնական միջոց:

Առողջապահության ոլորտում մատչելիության բարձրացումն ապահովվելու է պետական ծախսերի աճի, պետական ֆինանսական միջոցների ներոլորտային համապատասխան վերաբաշխման և օպտիմալացման ու կառավարման բարեփոխումների արդյունքում արդյունավետության բարձրացման հաշվին[23]:

[23]Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006, էջ 29

2.2. ՀՀ բնակչության վերարտադրության և կենսամակարդակի կանխատեսման ցուցանիշները

Թեև 90-ականներին Հայաստանի բնակչության ծնելիության մակարդակի անկման և մահացության մակարդակի աճի, ինչպես նաև բնակչության ինտենսիվ արտագաղթով

պայմանավորված բնակչության թվաքանակի նվազումը որոշակիորեն կայունացավ 2000-ական թվականներին, սակայն նվազման միտումը՝ որպես երևույթ դեռևս շարունակվում է: Այսպես, ՀՀ 2011թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ անցկացված մարդահամարի արդյունքներով ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ ՀՀ 2001թ. մարդահամարի նկատմամբ, նվազել է շուրջ 195 հազ. մարդով, կամ 6%-ով: Ընդ որում, միջմարդահամարային տարիների ընթացքում (2001-2011թթ.) ՀՀ բնակչության բնական հավելաճը, այն է՝ բնակչության թվաքանակի բնական ճանապարհով ավելացումը, կազմել էր շուրջ 126 հազ. մարդ, իսկ միգրացիայի մնացորդը՝ փոփոխությունը (նվազումը)՝ շուրջ -313 հազ. մարդ:

Բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառումն իրականացվում է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշով, որպես հաշվարկի հիմք ընդունելով ՀՀ վերջին՝ 2011թ.-ի մարդահամարի արդյունքները: Դրանք արդիականացվում են եռամսյակային պարբերականությամբ: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 2 986.1 հազ.մարդ և 2016թ. տարեսկզբի համեմատ այն նվազել է 12.4 հազ.մարդով, որը ձևավորվել է հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված բնակչության բնական հավելաճի և միգրացիայի մնացորդի տարբերությամբ:

Աղյուսակ 2.

Հայաստանի. Հանրապետության մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները, 2012-2017թթ.[24]

	Բնակչության թվաքանակը, տարեսկզբին	**Բնական հավելաճ**	**Միգրացիայի մնացորդ**	**Ընդհանուր հավելաճ/նվազում (+ , -)**
2012	3 021.4	14.9	-9.4 5	.5
2013	3 026.9	14.6	- 24.4	-9.8
2014	3 017.1	15.3	-21.8	-6.5
2015	3 010.6	13.9	-25.9	-12.0
2016	2 998.6	12.4	-24.8	-12.4
2017	2986.1	-	-	-

2017թ. տարեսկզբի դրությամբ արձանագրված ՀՀ մշտական բնակչության կազմում քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 63.7%, իսկ գյուղականինը՝ 36.3%: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության 47.5 %-ը կազմել է արական, իսկ 52.5%-ը՝ իգական սեռի բնակչությունը: Բնակչության միջին տարիքը, 2017թ.-ի տարեսկզբի դրությամբ, կազմել է 36.2 տարի և ձևավորվել է 3.7 տարվա խզվածք արական և իգական սեռերի միջև, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 34.3 և 38.0 տարին:

Ծնելիության մակարդակի նվազման և Հայաստանի համար բնորոշ, թե' կանանց և թե' տղամարդկանց շրջանում ծննդյան պահից կյանքի սպասվող միջին տևողության հարաբերականորեն բարձր ցուցանիշի համատեղ ներգործությամբ, ինչպես նաև տղամարդկանց էմիգրացիոն ակտիվության ընդգծված գերակշռման հանգամանքով պայմանավորված, 1996-ից 2016թթ. միջակայքում էական փոփոխության է ենթարկվել Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքը: ՀՀ 2011թ. մարդահամարի տվյալներով մինչև 16 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 20.2 տոկոս, 2001թ. մարդահամարի՝ 26.3 տոկոսի համեմատ: Աշխատունակ տարիքի (16-62) բնակչության տեսակարար կշիռը կազմել է 2011թ.՝ 67.8%, 2001թ.-ի 62.1%-ի համեմատ,

[24]Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

իսկ աշխատունակ տարիքից բարձր (63-ից բարձր) բնակչության տեսակարար կշիռը, համապատասխանաբար, 12.0%, 2001թ.-ի 11.6%-ի համեմատ:

ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող մշտական բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառմամբ 2017թ. տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 65.7%-ը կազմել է աշխատունակ տարիքի բնակչությունը (16-62 տարեկան),

21.1%-ը՝ 0-15 տարեկան երեխաները, իսկ 13.2%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր (63 և բարձր տարիքի) բնակչությունը: Հանրապետության 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել 521 տարեց և անչափահաս (0-15 տարեկան) անձ, նախորդ տարվա 509 մարդու համեմատ:

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ անհատների բարգավաճման համար:

Հայաստանը կարողացել է ապահովել առողջապահության հետևյալ ցուցանիշները՝ չնայած Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ ցածր պետական ֆինանսավորմանը: 2016թ.-ին առողջապահության ոլորտի մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը կազմել է 6.0%, ինչը համապատասխանում է 2015թ.-ի ցուցանիշին:

2016թ.-ին կյանքի սպասվող տևողությունը՝ ծնվելու պահից, տղամարդկանց մոտ կազմել է 71.6 տարի, որն ավելի բարձր է, քան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ այլ երկրներում, իսկ կանանց համար՝ 78.3 տարի: Այդ երկու ցուցանիշն էլ գերազանցել են 1996 և 2006 թթ.-ին գրանցված մակարդակները, որոնք կազմել են, համապատասխանաբար՝ 67.3 և 74.5 տարի (1996թ.), 69.8 և 76.0 (2006թ.):

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության գրանցումների, որոնք հանդիսանում են մահվան վերաբերյալ վիճակագրական տվյալների սկզբնաղբյուրը, արձանագրվել են մինչև մեկ տարեկան մանկական մահացության դեպքերի տարեցտարի անկում: 2016թ.-ի ընթացքում, կյանքի առաջին տարում, արձանագրվել է երեխաների մահացության 352 դեպք, իսկ մանկական

մահացության գործակիցը 1 000 կենդանի ծնվածի հաշվով կազմել է 8.6 պրոմիլ, 1996թ.-ի՝ 15.5 պրոմիլի և 2006թ.-ի՝ 13.9 պրոմիլի համեմատ:

Մինչև 5 տարեկան երեխաների մահացության գործակիցը (1 000 կենդանի ծնվածի հաշվով) 2016թ.-ին կազմել է՝ 10.1 պրոմիլ, 1996թ.-ի՝ 19.5 և 2006թ.-ի՝ 15.8 պրոմիլի համեմատ: 2016թ.-ին մայրական մահացության գործակիցը կազմել է՝ 29.6 պրոմիլ (100 000 կենդանի ծնվածի հաշվով), 1996թ.-ին արձանագրված՝ 20.8 և 2006թ.-ին՝ 26.6 պրոմիլի համեմատ:

Աղյուսակ 3.

Առողջապահական համակարգի տեսակարար ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016թ.[25]

	Հիվանդանոցներ ընդունված հիվանդների թվաքանակը 100 բնակչի հաշվով, մարդ	Հիվանդանոցային մահճակալների քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր	Մեկ հիվանդի ստացիոնար բուժման միջին տևողությունը, օր	Մեկ մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր	Ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը 10 000 բնակչի հաշվով, միավոր	Հաճախումների քանակն ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ մեկ բնակչի հաշվով
ք.Երևան	26.0	73.7	7.3	257	1.4	5.0
Արագածոտն	4.2	15.6	5.2	139	1.9	2.9
Արարատ	5.3	18.3	8.4	228	2.3	3.6
Արմավիր	5.0	13.4	5.2	197	2.3	3.5
Գեղարքունիք	5.3	32.5	17.4	284	1.7	3.4
Լոռի	8.3	22.0	6.3	242	1.9	3.9
Կոտայք	6.0	26.4	8.8	200	1.9	3.6
Շիրակ	8.6	36.1	7.3	177	1.3	3.6
Սյունիք	7.7	30.9	8.8	221	1.2	3.9
Վայոց ձոր	3.9	16.9	4.7	108	1.6	3.8
Տավուշ	6.5	20.7	4.7	146	2.2	3.1
Ընդամենը ՀՀ	13.4	41.8	7.6	240	1.7	4.1

2016թ.-ին բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են տնային տնտեսությունների ամբողջ ծառայությունների վրա կատարված ծախսերի 15.2%-ը: Հայաստանում անվիճելի է աղքատ տնային տնտեսությունների համար անվճար բժշկական փաթեթի կարևորությունը: Ուստի, հաշվի առնելով, որ այն կախված

[25] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

է ընտանեկան նպաստ ստանալուց, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության բարձրացումն, այլև աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածության աստիճանը:

Պետական պատվերից օգտվելու իրավունք ունեցել է բնակչության միայն 9.0%-ը: Ըստ աղքատության մակարդակի՝ պետական պատվերի իրավունք ունեցել է ծայրահեղ աղքատների 9.5%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 8.5%-ը և ոչ աղքատների՝ 9.2%-ը:

Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների միայն 15.5%-ն է ունեցել այդ փաթեթից օգտվելու իրավունք, այդ թվում՝ ծայրահեղ աղքատների՝ 13.8%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 15.1%-ը և ոչ աղքատների՝ 16.0%-ը:

Ինչ վերաբերում է ընտանեկան նպաստի համակարգում չհաշվառված տնային տնտեսություններին, ապա պետական պատվերի իրավունք ունեցել է 8.0%-ը, այդ թվում՝

ծայրահեղ աղքատների՝ 7.9%-ը, աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 6.6%-ը և ոչ աղքատների՝ 8.5%-ը: Միևնույն ժամանակ տնային տնտեսությունների 1.5%-ը տեղյակ էլ չէին ունեցե՞լ են, թե՞ ոչ, այդ փաթեթից օգտվելու իրավունք, այսինքն՝ առկա է չտեղեկացված լինելու հանգամանքը:

Կրթությունը կարող է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից: Այն դռներ է բացում աշխատանքի առջև և գրավական է հանդիսանում ֆինանսական վարկերի ստացման համար:

Կրթությունը տալիս է մարդկանց գիտելիք և հմտություններ, որոնք անհրաժեշտ են եկամուտների ավելացման և զբաղվածության հնարավորությունների ընդլայնման համար: Երբ կրթությունն ունի լայն տարածում և հասանելի է աղքատներին, կանանց և խոցելի խմբերին, ապա այն ունի նաև տնտեսական աճի լայն վերաբաշխվածության հեռանկար: Մյուս կողմից, աղքատությունը դրդում է ծնողներին երեխաներին հանել դպրոցից և ուղարկել աշխատելու, քանի որ վճարունակ չեն:

2016թ.-ին կրթության մասով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինը 2008թ.-ի համեմատ նվազել է (2008թ.-ին 13.7%-ից 2016թ.-ին կազմելով 11.0%): Ծախսերի ենթաճյուղային կառուցվածքում հիմնական շեշտադրումը դրված է միջնակարգ կրթության վրա:

Սոցիալական տրանսֆերտները ներառում են կենսաթոշակները և դրամական սոցիալական աջակցությունը: Կենսաթոշակները եկամտի կարևոր աղբյուր են բնակչության համար, հատկապես կենսաթոշակառուների համար, այն շատ դեպքերում եկամտի միակ աղբյուրն է, ուստի կենսաթոշակի չափը պայմանավորում է այդ խմբի բնակչության բարեկեցության աստիճանը: Իսկ դրամական սոցիալական աջակցության ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գործող ամենամեծ ծրագիրն ընտանեկան նպաստի ծրագիրն է: Այն ամենամեծն է բնակչության ընդգրկվածության, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով:

Թեև սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը տարեց տարի ավելանում են, դրանք շարունակում են ՀՆԱ-ի նկատմամբ մնալ բավական սահմանափակ մակարդակում (2016թ՝ 8.0%): Այդուհանդերձ սոցիալական տրանսֆերտները զգալիորեն նպաստում են աղքատության մակարդակի կրճատմանը: Ամբողջ բնակչության հաշվով եթե դադարեցվեն սոցիալական տրանսֆերտների բոլոր վճարումները (ներառյալ կենսաթոշակները և սոցիալական աջակցության նպաստները), իսկ տնային տնտեսությունները, բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կաճի, աղքատության ընդհանուր մակարդակը կավելանա 12.7 տոկոսային կետով կամ 43%-ով (29.4%-ից՝ 42.1%), աղքատությունը նաև էապես կխորանա և կսրվի: Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար:

Սոցիալական տրանսֆերտներն էական ազդեցություն ունեն նպաստառու տնային տնտեսությունների աղքատության մակարդակի կրճատման վրա, թեև ոչ բոլոր նպաստառուներն են կարողանում հաղթահարել աղքատության բեռը դրամական աջակցություն ստանալուց հետո, նրանց շրջանում էապես կրճատվում է թե՛ աղքատության խորությունը, և թե աղքատության սրությունը:

Կենսաթոշակները, որպես սոցիալական տրանսֆերտների առավել մեծ բաղադրիչ, առավել մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում,

քան դրամական սոցիալական աջակցությունը: Դրամական սոցիալական աջակցության՝ մասնավորապես, ընտանեկան նպաստի դերը էական է, սակայն նախորդ տարիների համեմատ այն նվազում է:

Չնայած Ընտանեկան նպաստի ծրագրի բնակչության ծածկույթը կայուն է (2016թ.-ին բնակչության 13.6 տոկոսը), 2016 թ.-ին ամենաաղքատ քվինտիլի ծածկույթը նվազել է՝ կազմելով 35.3 տոկոս՝ 2015 թ.-ի 38.9-ի համեմատ, իսկ վերին երեք քվինտիլների ծածկույթները աճել են 15.7-ից մինչև 19.9: Ծածկույթում այդ բաշխիչ փոփոխությունները նույնպես արտացոլում են հասցեականության ճշգրտության վատթարացման վրա:

Ընդգրկվածության մեջ տեղի ունեցող այդ բաշխվածության փոփոխությունները արտացոլվում են նաև հասցեականության ճշգրտության վատթարացմամբ, ինչը գնահատվում է Ընտանեկան նպաստների և շահառուների մասնաբաժնով, որոնք «մինչև ԸՆ ստանալը» հաշվառված էին սպառման ամենաստորին քվինտիլներում:

2016թ.-ին Ընտանեկան նպաստի ծրագրի շահառուների 73 տոկոսը պատկանել է ներքևի երկու քվինտիլին՝ 2015 թ.-ի 74.2 տոկոսի համեմատ, ինչպես նաև բոլոր նպաստների 72.5%-ը 2016թ.-ին ուղղվել են ամենաաղքատ քվինտիլներին՝ նվազելով 2015թ. 75.2%-ից:

Ընտանեկան նպաստի ծրագրի միջոցով անհրաժեշտություն կա հետագայում բարելավել աղքատների ծածկույթը, քանզի ամենաաղքատ 20% բնակչության 75.5%-ը դուրս է մնում դրամական աջակցության ծրագրերից: Նույնիսկ եթե հաշվի առնվի սոցիալական աջակցության ամբողջ համակարգը, որը ներառում է ինչպես երեխաների, այնպես էլ այլ տեսակի նպաստները, ծածկույթի ճեղքվածքը ամենաաղքատ քվինտիլում նշանակալի է, քանի որ բնակչության 56.6%-ը չի ստանում որևէ դրամական սոցիալական աջակցություն:

ԳԼՈՒԽ 3. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. ՀՀ սոցիալական վերափոխումների արդյունավետության բարձրացման ուղիները

Սոցիալական պաշտպանությունը հանդիսացել և շարունակում է հանդես գալ որպես ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը[26]: Սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպա- տակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապա- հովումը: Վերոհիշյալ նպատակին հասնելու համար սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվում է լայնածավալ պետական միջամտություն:

2016թ.-ին Հայաստանում սոցիալական նպաստների և կենսաթոշակների համար ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 405.1 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 8.0%-ը (2008թ.-ի՝ 207.9 մլրդ. դրամի կամ ՀՆԱ-ի 5.8 %-ի, 2015թ. 391.0 մլրդ. դրամի կամ 7.8%-ի համեմատ): Ամենամեծ սոցիալական տրանսֆերտները կենսաթոշակներն են, որոնք ներառում են տարիքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակները:

2016թ.-ին սոցիալական տրանսֆերտները կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական ամբողջական եկամտի 16.0%-ը (2008թ.-ին՝16.5%, իսկ 2015թ.-ին՝ 16.7%): Ստորին քվինտիլում սոցիալական տրանսֆերտները կազմել են տնային տնտեսությունների մեկ չափահաս անձի հաշվով միջին ամսական եկամտի 21.1%-ը, մինչդեռ սպառման վերին քվինտիլում գտնվող տնային տնտեսությունների համար դրանք կազմել են միայն 10.2%:

[26] 2014-2017 թվականների ՀՀ կառավարության ծրագիրը (ՀՀ կառավարության 19.05.2014 թ. N 511-Ա որոշում), ՀՀ Նախագահի նախընտրական ծրագիրը, ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը (ՀՀ կառավարության 27.05.2014 թ. N 442-Ն որոշումը):

Ըստ բնակավայրերի դիտարկելիս՝ սոցիալական տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են եղել հիմնականում Երևանից դուրս քաղաքաբնակ տնային տնտեսությունների

համար՝ 17.1%, իսկ երևանաբնակների և գյուղաբնակների համար սոցիալական տրանսֆերտները կազմել են միջին ամսական եկամտի 13.2 և 13.1 տոկոսը:

2016թ.-ին տնային տնտեսությունների անդամների 13.6%-ը որպես եկամտի աղբուր նշել է ԸՆ ծրագրի միջոցով կատարվող դրամական փոխանցումները, կենսաթոշակները՝ 52.4%-ը, երեխայի ծննդյան և խնամքի հետ կապված նպաստները՝ 1.3%-ը, և այլ նպաստները՝ ներառյալ արտոնությունները՝ 2.7%-ը:

Համընդհանուր բարեփոխումների հայեցակարգը ընդգրկում է հետևյալ հիմնական ուղղությունները՝ սոցիալական, տնտեսական, կառավարման, հակակոռուպցիոն, կրթամշակութային և առողջապահական: Տնտեսական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն կայուն ու երկարատև տնտեսական աճին, այլ նաև դրա ճիշտ և հավասարաչափ բաշխմանը: Առաջարկվող նոր տնտեսական քաղաքականության անկյունաքարը տնտեսական և քաղաքական գործընթացների կարգավորման գործում հանդիսանում է՝

1) պետության դերի բարձրացումը (որոշակի շրջանակներում), որպես բնակչության եկամուտների բարձրացման և հնարավորինս հավասարաչափ բաշխման գործոն,

2) աշխատատեղերի ստեղծումը և աշխատաշուկայի զարգացումը,

3) ֆինանսական համակարգի զարգացումն ու արդյունավետության բարձրացումը:

Ֆինանսական հարաբերությունների պետական կարգավորմամբ առաջարկվում է բարեփոխումներ հետևյալ ուղղություններով՝ ներդրումային արդյունավետ քաղաքականություն, դրամավարկային հարաբերությունների պետական կարգավորման և

հարկաբյուջետային նոր քաղաքականության մշակման և իրագործման արդյունավետության բաձրացում: Ներդրումային քաղաքականության անկյունաքարը պետք է հանդիսանա ներդրումային հոսքերի ակտիվացումը տնտեսության այն

ճյուղերում, որոնք կապահովեն մրցակցություն համաշխարհային շուկայում, որի համար գլխավոր աղբյուրներից է արտաքին վարկերի խելամիտ բաշխումը և օգտագործումը: Տնտեսական բարեփոխումների դրամավարկային հարաբերությունների կարգավորման մեխանիզմը ենթադրում է հակաինֆլյացիոն ծրագրերի մշակում՝ բնակչության եկամուտների պետական կարգավորմամբ և բնական մենաշնորհներ ունեցողների ծառայությունների սակագների սահմանմամբ: Տնտեսական բարեփոխումների նոր հարկային քաղաքականությունը ենթադրում է նաև հարկային՝ հարկային արձակուրդներ ու նվազեցված դրույքաչափեր, հարկային վարկեր ու ներդրումային նվազեցումներ և արագացված ամորտիզացիա:

Տնտեսական բարեփոխումների հարկային արտոնությունների համակարգում կարևորվում է արագացված ամորտիզացիան: Այդ համակարգն ընդհանուր առմամբ պահանջում է նվազագույն վարչարարական ծախսեր ու հարկային եկամուտների կորուստներ, քանի որ ակտիվ կյանքի սկզբի տարիներին չստացված հարկային եկամուտները փոխհատուցվում են հետագա տարիների ընթացքում առավել բարձր հարկային վճարներով:

Հասարակական կյանքի սոցիալ-տնտեսական պայմանների կարգավորումը ու բարելավումը, բնակչության բոլոր խավերի բարեկեցության ապահովումը և կյանքի որակի բարելավման հեռանկարները պետք է հանդիսանան պետության սոցիալական քաղաքականության հիմնաքարը: Սոցիալական բարեփոխումների համակարգը կամ ծրագիրը ընդգրկում է հետևյալ կարևոր միջոցառումների փաթեթը՝

1. բնակչության կենսաթոշակային և կարիքավոր ընտանիքներին աղքատության ընտանեկան նպաստով ապահովումը, ներառյալ միայնակ տարեցների սոցիալական սպասարկումը, հաշմանդամների հասարակական ինտեգրման և վերականգնման հարցերը,

2. ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանությունն ու պետական աջակցության ցուցաբերումը,

3. բնակչության զբաղվածության պետական կարգավորման հարցերը,

4. աշխատանքի ու աշխատավարձի հիմնախնդիրները,

5. կրթական և առողջապահական համակարգերի բարեկավման և առողջացման հիմնահարցերը:

Անհրաժեշտ է պարտադիր սոցիալական ապահովագրություն իրականացնել ծերության, հաշմանդամության, ժամանակավոր անաշխատունակության, ինչպես նաև արտադրությունում արտադրական խեղման, վնասվածքի և մասնագիտական հիվանդությունների դեպքերում: Տնտեսական և սոցիալական քաղաքականությունը հանդիսանում է մակրոտնտեսական կարգավորման և, առհասարակ, տնտեսության վարման կարևոր մեխանիզմ և պետությունն ի դեմս իշխանությունների պետք է կարգավորիչ դերակատարում ունենա, քանի որ այս ոլորտը հանդիսանում է շուկայական տնտեսության բացթողումներից մեկը: Այստեղ, իր որոշիչ դերն ունի մեզանում այնքան տարածված տնտեսական և քաղաքական կապիտալների սետաճումը և բևեռացումը: Ինչպես նաև կառավարման բարեփոխումների շրջանակում առաջին պլան պետք է դնել հակակոռուպցիոն քաղաքականության մշակումը և իրականացումը:

ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման կամ բնակչության կյանքի բարձր որակի ապահովման մեխանիզմներ ապահովելու համար առաջնային ճանապարհը տնտեսության զարգացումն է և տնտեսական կայուն աճի ապահովումը երկարաժամկետում: Տնտեսության կայուն զարգացումը ձևավորում է բարեկեցության բարձրացման (աղքատության հաղթահարման) երկրորդ և ոչ պակաս կարևոր գործոն՝ աշխատատեղերի ստեղծումը ու բնակչության զբաղվածության ապահովումը, որտեղ կարևորվում է ինքնազբաղվածության և փոքր ու միջին բիզնեսի խրախուսումը և պետական օժանդակությունը: Մեզանում միջին խավ ձևավորելու՝ կյանքի որակը բարելավելու համար անհրաժեշտ է բարձրացնել բնակչության եկամուտները՝ պետությունը պետք է որդեգրի նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և այլ նվազագույն նորմատիվային ցուցանիշների բարձրացման կուրս: Կյանքի բարձր որակի ապահովման մեխանիզմների ձևավորման հաջորդ կարևոր ուղին բաշխման և վերաբաշխման հարաբերությունների կարգավորումն է պետության կողմից և դրա վերահսկողությունը:

Անհրաժեշտ է որդեգրել հարկային համակարգում եկամուտների հարկման պրոգրեսիվ քաղաքականության խստացում, որի առանցքը պետք է հանդիսանա՝

բնակչության առավել ապահովված խավերի հարկման ավելի բարձր տոկոսային հարաբերակցությունը, քան՝ աղքատներինը, այսինքն շատից՝ շատ և քչից՝ քիչ սկզբունքով:

ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման միջոց կարող է լինել հարկային դաշտում ստվերային տնտեսության ընդգրկումը: ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման հաջորդ ուղին սոցիալական ընդգրկուն ծրագրերի մշակումն է ու դրանք գործողության մեջ դնելն է՝ ՀՀ սոցիալական ապահովագրության և սոցիալական պաշտպանության բնագավառի ծրագրերի հասցեականության և արդյունավետության բարձրացումը: ՀՀ սոցիալական ապահովագրության արդյունավետության բարձրաց-ման համար կարևոր է, որ հանրապետությունում ձևավորվի և զարգանա ապահովագրական ինստիտուտը, որի առանցքը պետք է հանդիսանան կամավոր և ոչ պետական ապահովագրական համակարգերի ձևավորումը և զարգացումը: ՀՀ բնակչության կյանքի որակի բարելավման համար կարևորվում աղքատության գծի բարձրացումը, առողջապահական ծառայությունների ընդլայնումը ու զարգացումը, կրթության և գիտության պետական հոգածությունը և օժանդակությունը:

3.2. Բնակչության դրամական եկամուտների ավելացման և բաշխման պետական կարգավորումը

Սոցիալական աջակցության դերը աղքատության նվազեցման և անհավասարության կրճատման տեսանկյունից անհերքելի է: Ավելին, այն, տարիներ շարունակ, համարվել է աղքատության դեմ պայքարի կարևորագույն և անկյունաքարային գործիքը Համաշխարհային բանկի հետազոտողների կողմից՝ նախքան տարբեր երկրներում ակտիվ զբաղվածության քաղաքականության ներդրումն ու խթանումը[27]: Ըստ Համաշխարհային բանկի զեկույցի սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը տնտեսության վրա կարող են ազդել 3 մակարդակներում՝ ազգային, համայնքի և տնային տնտեսությունների: Ազգային մակարդակում սոցիալական աջակցությունն ու գործազրկության նպաստը դրական ազդեցություն են

[27] Ferreira Francisco HG, and Michael Walton, eds., World development report 2006, Equity and development, Vol. 28, World Bank Publications, 2005.

բերում սոցիալական համերաշխությանը, բռնությունների նվազեցմանը, կապիտալի շուկայի զարգացմանը և արդյունավետ պահանջարկի խթանմանը: Համայնքային կամ լոկալ մակարդակում սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը օգտակար են տեղական ենթակառուցվածքների զարգացմանը (օրինակ, հանրային աշխատանքի միջոցով), նպաստում սպառման աճին, որն էլ իր հերթին հանգեցնում է ներդրումների ավելացմանը: Եվ, վերջապես, տնային տնտեսության մակարդակում սոցիալական աջակցությունը և գործազրկության նպաստը կանխարգելում են տնային տնտեսության ունեցվածքի (բնակարան, ավտոմեքենա և այլն) վաճառքը՝ ընթացիկ սպառման ապահովման նպատակով և նպաստում են մարդկային կապիտալի զարգացմանը: Այժմ դիտարկենք սոցիալական աջակցության ծրագրերի և գործազրկության նպաստի արդյունավետ ներդրման միջազգային փորձը և դրա կիրառման հնարավորությունը ՀՀ-ում: Քանի որ Համաշխարհային բանկը սոցիալական աջակցության նպատակով տրամադրվող նպաստներն ու գործազրկության նպաստը դիտարկում է առանձին, հետևաբար սկզբից կանդրադառնանք գործազրկության նպաստի արդյունավետ ներդրման մեխանիզմներին, այնուհետև՝ տարբեր սոցիալական ծրագրերի ազդեցությանը կոնկրետ երկրների սոցիալ տնտեսական միջավայրի վրա և կներկայացնենք հիմնավորումներ ՀՀ-ում իրականացվող սոցիալական ծրագրերի բարեփոխման անհրաժեշտության վերաբերյալ:

Գործազրկության նպաստները, բացի վերոնշյալ դրական ազդեցություններից, կարող են շահառուների մոտ ստեղծել խնամակալական տրամադրություններ և չաշխատելու

խթաններ: Օրինակ, միջին և բարձր եկամուտ ունեցող մի շարք երկրներում գործազրկության նպաստը մեծացրել է ստվերային աշխատաշուկան և նվազեցրել աշխատուժի առաջարկը: Այդպիսի երկրներից է Ռումինիան, որտեղ գործազրկության բարձր նպաստները նվազեցրել են մարդկանց՝ աշխատանքի ընդունվելու ձգտումը: Սակայն գործազրկության նպաստների և աշխատանք ունենալու ցանկության միջև հակադարձ համեմատական կապը օրինաչափություն չէ: Ավելին, մի շարք լատինամերիկյան երկրներում, ինչպիսիք են Բրազիլիան, Էկվադորը և Մեքսիկան գործազրկության նպաստները որևէ ազդեցություն չեն ունեցել աշխատանքի ընդունվելու

ցանկության վրա: Միաժամանակ, վիճակագրական մեթոդների օգնությամբ իրականացված հետազոտությունը վկայում է, որ Եթովպիայում սննդային օգնության ծրագիրը որևէ կերպ չի ազդել թիրախային խմբի զբաղվածության, աշխատանքի որակի և միջին աշխատավարձի վրա: Ավելին, հարցման արդյունքները ցույց են տվել, որ ծրագրի մեկնարկից հետո ինքնազբաղվածների գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտը էական փոփոխության չի ենթարկվել[28]:

Գործազրկության նպաստների կողմնակի ազդեցությունը մեղմելու կամ չեզոքացնելու նպատակով տարբեր երկրներում դրանք տրվում են որոշակի պայմաններով՝ շահառուների մոտ պատասխանատվության զգացումը մեծացնելու և գործազրկության նպաստը որպես անաշխատ եկամուտ չդիտարկելու նպատակով: Նշյալ պայմանները, դրանց հավանական ազդեցությունը և իրագործման համար անհրաժեշտ գործիքները ամփոփված են Աղյուսակ 4-ում:

Սակայն միայն վերոնշյալ ժամանակային սահմանափակումները բավարար չեն զբաղվածության ցանկալի մակարդակ ապահովելու համար: Այդ իսկ պատճառով էլ ժամանակահատվածի սահմանափակումը պետք է ուղեկցվի լրացուցիչ պայմանների սահմանմամբ:

Այս առումով հատկապես ուշագրավ է ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում իրականացված փորձարկումը, որի մասին մասնակիցները տեղյակ չէին: Մասնակիցներին պայմանականորեն բաժանել էին 4 խմբի: Առաջին խմբի մասնակիցները պետք է կապվեին շաբաթական առնվազն 4 գործատուների հետ և իրենց փոխադարձ կապը հաստատեին գործատուների կողմից մակագրված փաստաթղթերով: Երկրորդ խմբի մասնակիցները պետք է կապվեին շաբաթական 2 գործատուների հետ, սակայն առանց հավաստող փաստաթղթեր ներկայացնելու: Երրորդ խմբի մասնակիցները պետք է մասնակցեին աշխատանքի տոնավաճառներին, իսկ չորրորդ խմբի մասնա- կիցները տեղեկացվել էին, որ աշխատանք փնտրելու իրենց գործողությունները վերահսկվելու են և ոչ բավարար արդյունքների դեպքում նրանք այլևս չեն ստանա գործազրկության նպաստ: Սույն փորձարկման նպատակն էր պարզել,

[28] Abdulai A., C. Barrett and J. Hoddinott, Does Food Aid Really Have Disincentive Effects? New Evidence from Sub?Saharan Africa, World Development 33 (10), 2005.

թե նշյալ մեթոդներից որն է ամենաարդյունավետը: Արդյունքները ցույց տվեցին, որ աշխատաշուկաներին մասնակցելը նվազեցնում է աշխատանք գտնելու ժամանակը 5%-ով, աշխատանք փնտրելու գործողությունների վերահսկումը՝ 7.5%-ով, իսկ հավաստող փաստաթղթերի ներկայացումը՝ 6%-ով:

Աղյուսակ 4

Գործազրկության նպաստների շահառուների առջև դրվող պայմանները, դրանց հավանական ազդեցությունը և պայմանների բավարարման համար անհրաժեշտ նախադրյալները[29]

Պայմաններ	**Հավանական ազդեցություն**	**Անհրաժեշտ նախադրյալներ**
Նպաստի չափի և տևողության սահմանափակում	Գործազրկության ցածր նպաստը հավանական է, որ կարագացնի աշխատանք փնտրելու ինտենսիվությունը, միաժամանակ նվազեցնելով ակնկալվող նվազագույն աշխատավարձը (reservation wage): Նպաստի չափի ժամանակային սահմանափակումը նույնպես դրական է ազդում աշխատանք փնտրելու ջանքերի վրա:	Աշխատանքի պահանջարկ և ազատ աշխատատեղեր:
Կոնկրետ պարտավորությունների սահմանում (մասնակցություն վարպետային ուսուցման դասընթացներին, աշխատանքի տոնավաճառներին և այլն)	Դրական ազդեցություն ունի ոչ միայն աշխատանք փնտրելու ինտենսիվության, այլև աշխատանքի որակի վրա:	Մոնիթորինգի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ:
Նյութական խթաններ (օրինակ բոնուսներ արագ աշխատանքի տեղավորման դեպքում)	Դրական ազդեցություն ունի ոչ միայն աշխատանք փնտրելու ճիգերի, այլև ոչ ստվերային հատվածում աշխատելու ցանկության վրա:	Առկա աշխատատեղեր և գրավիչ խթաններ:

[29] Հայրապետյան Ա., Սոցիալական աջակցության և գործազրկության նպաստը որպես աղքատության հաղթահարման հորձիք, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2017, N 1, էջ 45-47

Զբաղվածության խթանման համար լայնորեն տարածված է նաև ֆինանսական խթանների ինստիտուտը, ըստ որի այդ խթանները կարող են լինել տարբեր տեսակի, սկսած պետության կողմից վճարվող խրախուսական վճարներից, վերջացրած որոշ ժամանակ աշխատավարձը չհարկելուց: Օրինակ, Մեծ Բրիտանիայում կիրառվում է «վաստակած եկամտահարկի» սկզբունքը, որը տրվում է նախկինում գործազրկության նպաստի շահառու այն քաղաքացիներին, ովքեր համաձայնել են ցածր վարձատրությամբ աշխատանքներ կատարել: Սակայն նմանատիպ խրախուսանքները ոչ միշտ են բերում ցանկալի արդյունքի: Մեյերը նշում է, որ զարգացած երկրներում աշխատակիցները հաճախ դրսևորում են օպորտունիստական վարքագիծ և արդյունքում գործատուների հետ համաձայնությամբ դուրս են գալիս աշխատանքից, որպեսզի որոշ ժամանակ հետո վերադառնան և ստանան չհարկվող աշխատավարձը:

Կուտակային ֆոնդերը նույնպես դասվում են գործազրկության նպաստների վճարման տարածված մեխանիզմների շարքին: Միջազգային պրակտիկայում տարածված են ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր սկզբունքով գործող կուտակային ֆոնդերը: Մեխանիզմը հետևյալն է. աշխատողի ամսական աշխատավարձից կատարվում են մասնահանումներ, իսկ աշխատանքից ազատման պարագայում այդ մասնահանումներից վճարվում է ամսական գործազրկության նպաստը, և եթե կենսաթոշակի անցնելու պահին հաշվի վրա առկա են չօգտագործված միջոցներ, ապա դրանք գումարվում են կենսաթոշակային վճարումներին: Այս մեխանիզմը հաջողությամբ ներդրվել է Կոլումբիայում, իսկ Չիլիում կուտակային ֆոնդից բացի, գործում է նաև համերաշխության ֆոնդը:

Հորդանանում, եթե անձը չի ունեցել բավարար չափով խնայողություն, որպեսզի ստանա գործազրկության վճար, սակայն ունի բավականաչափ կենսաթոշակային վճարումներ, ապաստանում է գործազրկության վճար կուտակած կենսաթոշակային վճարումների հաշվին:

ՀՀ-ում գործազրկության վճարների վերաբերյալ պրակտիկան վերացավ 2014թ. «Զբաղվածության մասին» օրենքի ընդունմամբ: Այն փոխարինեց 2005թ. ընդունված «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքին, որով էլ կարգավորվում էր գործազրկության

վճարման կարգը: Գործազրկության նպաստի հետ կապված վերոնշյալ ռիսկերը ՀՀ աշխատանքի շուկայի վրա ոչ մի ազդեցություն չեն ունեցել: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ՀՀ-ում վճարվող գործազրկության վճարը, որը կազմում էր 18000 դրամ ավելի փոքր է, քան նվազագույն սպառողական զամբյուղի մեծությունը: Ուստի, առաջարկում ենք վերականգնել գործազրկության նպաստը կենսաթոշակային տարիքի չհասած այն քաղաքացիների կտրվածքով, ովքեր վերջին երեք տարիների ընթացքում շարունակաբար վճարել են եկամտային հարկ: Գործազրկության նպաստը պետք է առնվազն հավասար լինի նվազագույն սպառողական զամբյուղի մեծությանը և ըստ Համաշխարհային բանկի փորձագետների, գործազրկության նպաստը պետք է գերազանցի սոցիալական աջակցության վճարները, իսկ վերջինս էլ պետք է լինի առնվազն նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արտահայտության չափ: Ենթադրվում է, որ եթե սոցիալական աջակցության վճարների մեծությունը գերազանցի գործազրկության նպաստի չափը, ապա հնարավոր է, որ մեծանա չաշխատելու և սոցիալական աջակցության վճարներից օգտվելու գայթակղությունը: Գործազրկության նպաստի վերականգնումը, բացի վերոշարադրյալ ազգային, համայնքային և տնային տնտեսությունների մակարդակում ունեցած ազդեցությունից, թույլ կտա աշխատանքը կորցրած անձանց խուսափել սպառման շոկից և աղքատությունից: Անշուշտ, գործազրկության նպաստի վերականգնումը կնպաստի պետություն-քաղաքացի կապի ամրապնդմանը և սոցիալական պարտավորությունների ամբողջ ծավալով իրականացմանը: Միաժամանակ, պետք է վերականգնել նաև նախկինում գործող նվազագույն ու առավելագույն ժամկետները և ներդնել՝ շահառուների առջև դնելով այնպիսի պայմաններ, ինչպիսիք են ՀՀ Աշխատանքի ու սոցիալական հարցերով նախարարության կողմից կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներին մասնակցությունը, աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունն երի ծառայություններից օգտվելը և այլն: Գործազրկության նպաստի վճարումը պետք է դադարի, եթե շահառուն երկու անգամ հրաժարվում է իրեն առաջարկված «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի հատկանիշներով հարմար աշխատանքից: Հաշվի առնելով միջազգային հաջողված փորձը, առաջարկում ենք ներդնել գործազրկության կամավոր ապահովագրության ինստիտուտը, որը ոչ միայն չի

ավելացնի ՀՀ պետական բյուջեի սոցիալական ծախսերը, այլև կնպաստի ՀՀ-ում կապիտալի շուկայի զարգացմանը:

Ըստ Համաշխարհային բանկի փորձագետների, սոցիալական աջակցության ծրագրերը պետք է իրականացվեն հավասարության, ընդգրկունության, հարկա-բյուջետային կայունության, արդյունավետության, արդյունքաստեղծության և ռիսկերին արագ և պատշաճ արձագանքելու սկզբունքների վրա: Հավասարության սկզբունքի տակ հասկացվում է, որ միևնույն սոցիալական կարգավիճակում գտնվող շահառուները պետք է ստանան հավասարաչափ օժանդակություն:

Ընդգրկվածության սկզբունքի տակ հասկացվում է, որ սոցիալական աջակցության ծրագրերը պետք է հասցեագրված լինեն բոլոր կարիքավոր անձանց և ոչ մի կարիքավոր անձ դուրս չմնա սոցիալական աջակցության ծրագրերից: Սոցիալական աջակցության ծրագրերը պետք է լինեն կայուն, այսինքն բոլոր ծախսերը պետք է հաշվարկվեն այնպես, որ որևէ իրավիճակ, այդ թվում և դեմոգրաֆիական (ժողովրդագրական) պատկերի փոփոխությունը չնվազեցնի սոցիալական ծախսերի ծավալը: Խթանման սկզբունքը ենթադրում է, որ ծրագրերը պետք է նպաստեն մարդկային կապիտալի զարգացմանը, խթանեն զբաղվածությունը և նպաստեն ֆինանսական շուկաների զարգացմանը: Արդյունավետության սկզբունքի համաձայն, սոցիալական աջակցության ծրագրերով տրամադրվող գումարները պետք է ծախսվեն առավելագույնս արդյու նավետ: Եվ վերջապես, ռիսկերին արագ և պատշաճ արձագանքման սկզբունքը ենթադրում է, որ սոցիալական աջակցության ծրագրերը պետք է թիրախավորեն տնային տնտեսությունների ինչպես իդիոսինկրատիկ (մարտահրավերներ, որոնց բախվում են առանձին տնային տնտեսությունները), այնպես էլ կովարիանտ (մարտահրավերներ, որոնք ծառացած են տնային տնտեսությունների մեծ մասի առջև) ռիսկերը:

ՀՀ-ում սոցիալական նպաստների տրամադրումը կարգավորվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով: Ըստ նշյալ օրենքի, պետական նպաստների տեսակներն են, ընտանեկան և սոցիալական նպաստները, հրատապ օգնությունը,

երեխայի ծննդյան միանվագ նպաստը, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը, ժամանակավոր անաշխատունակության ու ծերության նպաստները,

հաշմանդամության նպաստը, կերակրողին կորցնելու թաղման դեպքում նպաստները[30]: Ընտանեկան նպաստի և սոցիալական նպաստի նպատակը սոցիալական բևեռացվածության մեղմումն է (ընդգրկվածության սկզբունք):

Բացի այդ, ըստ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 14-ի N 5-Ն սոցիալական վիճակը ծանրացնող յուրաքանչյուր գործոն ավելացնում է ընտանեկան նպաստի կամ կենսաթոշակի չափը (հավասարության սկզբունք)[31]: Սակայն պետք է նշենք, որ սոցիալական աջակցության տրամադրման համակարգը չի բավարարում խթանման սկզբունքին (incentive compatibility), այսինքն չի նպաստում զբաղվածության խթանմանը և մարդկային կապիտալի աճին: Ուստի, այս առումով ուսանելի կարող է լինել Հնդկաստանի փորձը, որը կներկայացնենք ստորև:

Հնդկաստանի կառավարությունը 2006-2007թթ. Բյուջեով շուրջ մեկ միլիարդ դոլլար (ՀՆԱ-ի 0.3%-ը) հատկացրեց Գյուղական ազգային զբաղվածության ծրագրին, որի նպատակն էր աղքատության ստորին գծից անդին գտնվող գյուղացիների զբաղվածության ապահովումը: Ծրագրով նախատեսված էր, որ նպաստառու ընտանիքների աշխատունակ անդամները պետք է առնվազն 100 օր ներգրավված լինեին հանրային աշխատանքներում: Ծրագրված էր, որ մասնակիցները պետք է ներգրավված լինեին բերքահավաքին, ոռոգման համակարգի շինարարության, ջրհորների փորման, մշակաբույսերի տնկման և նմանատիպ այլ աշխատանքներում: Ծրագիրը հատկապես դրական ազդեցություն է ունեցել գյուղաբնակ ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների վրա[32]: Ծրագիրը անշուշտ նպաստել է մասնակիցների, հմտությունների ձեռքբերմանը և ունեցած հմտությունների կատարելագործմանը: Մեկ այլ նմանատիպ ծրագիր, որը կրում էր «Աշխատավարձ հանրային աշխատանքի դիմաց» խորագիրը, հաջողությամբ իրականացվել է Եթովպիայում, որը նպաստել է ծրագրի մասնակիցների աշխատանքի տեղավորմանը մասնավոր հատվածում, քանի որ

---

[30] «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2013.12., Հոդված 5

[31] ՀՀ կառավարության N 5-Ն որոշում. 2016թ. Ընտանեկան նպաստի, Սոցիալական նպաստի, Հրատապ օգնության եւ մինչեւ երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին, ՀՀՊՏ 2016.01.20/4(1184) Հոդվ. 36

[32] Hirway Indira, M.R. Saluja and Bhupesh Yadav, Analysing multiplier impact of NREGA works through village SAM modeling, Annandale-on-Hudson, NY: The Levy Economics Institute of Bard College, New York, United State, 2009, p. 4.

աշխատունակ նպաստառուները նախընտրել են աշխատանքի անցնել մասնավոր հատվածում, որտեղ աշխատավարձերն ավելի բարձր են, քան ստացած ընտանեկան նպաստների դիմաց կատարել հանրային աշխատանքներ[33]:

Ուստի, առաջարկում ենք ՀՀ-ում ներդնել Հնդկաստանի հաջողված փորձը և չաշխատող, բայց աշխատունակ ընտանիքի անդամներ ունեցող նպաստառու տնային տնտեսությունների կտրվածքով հանրային աշխատանքներին մասնակցությունը դարձնել պարտադիր: Այդպիսի ինստիտուտի ներդրումը ոչ միայն կնպաստի տնտեսական աճի ավելացմանը, այլև կավելացնի շահառուների, աշխատանքի տեղավորման ձգտումը:

Պետական նպաստների արդյունավետ տնօրինման նպատակով, կարծում ենք, որ պետք է ընդօրինակել ԱՄՆ-ի փորձը և չաշխատող աշխատունակ անդամներ ունեցող նպաստառու տնային տնտեսություններին ընտանեկան նպաստների մի մասը վճարել սննդային կտրոններով: Այս համակարգը պետք է ներդրվի միմիայն ՀՀ այն բնակավայրերում, որտեղ կան անհրաժեշտ ենթակառուցվածքներ և մնացյալ այլ նախադրյալներ, սննդային քարտերի համակարգը հաջողությամբ ներդնելու համար:

Մշակելով աղքատության հաղթահարման ծրագիր, կառավարությունը մշակել և իրականացնում է տնտեսական զարգացման հեռանկարային ծրագիրը, որը տնտեսության զարգացման միջոցառումների համակարգ է: Այդ համակարգի կարևոր տարրը պետք է լինեն տնտեսության պետական կարգավորման և տնտեսական քաղաքականության բարելավման, տնտեսական ակտիվության ապահովման, մասնավորեցման գործընթացի կատարելագործման, ազգային խնայողության ավելացման և տնտեսության մեջ իրականն ներդրումների ապահովման, սոցիալական ապահովման միջոցառումների ամբողջությունը:

Պետք է մշակել նաև արտագաղթած բնակչության վերադարձի ծրագիր: Այսինքն, տնտեսական քաղաքականությունը պետք է պարունակի նաև ազգապահպան ռազմավարական ծրագրեր: Աղքատության մակարդակի կրճատման առումով պետք է կատարելագործել ներդրումային քաղաքականությունը: Գործարար միջավայրի

[33] Bush Jennifer, Ejigayehu Tefera, Yeshitla Admassu, and Jamal Abdella, Ethiopia Food Aid Impact Study: Meda Welabu Woreda, Christian Aid Study, March, 2001.

բարելավումը ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն անդրադառնալով բնակչության կենսամակարդակի վրա, ինչը իր հերթին, պետք է հանգեցնի աղքատության մակարդակի կրճատմանը: Տնտեսական մրցակցության զարգացումը կնպաստի բնական մենաշնորհների կողմից մատուցվող և մյուս ապրանքների ու ծառայությունների մատչելիության մակարդակի պահպանմանը, այդ ծառայությունների մատչելիության մակարդակի պահպանմանը, այդ ծառայունների մատչելիության մակարդակի բարձրացմանը, տնտեսավարող սուբյեկտների ավելացմանը և այդ միջոցով զբաղվածության ընդլայմանը, ինչպես նաև տնտեսական գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, եկամուտների և վերաբաշխման ենթակա գումարների ավելացմանը, արակյալ ապրանքների և ծառայությունների շրջանակի ընդլայնմանը, շուկայում գների ճկունության ապահովմանը, եկամուտների բևեռացման խնդրի մասնակի լուծմանը: Այս ամենը կանդրադառնա բնակչության կենսամակարդակի վրա և կկրճատի աղքատության մակարդակը:

Պետք են նաև պետական մոտեցումներ ստվերային տնտեսության հիմքերի կրճատման և կոռուպցիայի հնարավորությունների նեղացման գործում: Ստվերային տնտեսության կրճատման միտումը կհանգեցնի թաքնված զբաղվածության մի մասի լեգալացման և խիստ անապահով խավի որոշակի կրճատման:

Պետք է մշակել նաև տնտեսական քաղաքականության այնպիսի ծրագիր, որն ուղղված լինի եկամուտների բաշխման անհավասարության կրճատմանը:

Կարևոր է աշխատողների սոցիալական պաշտպանվածության գործում մակրոտնտեսական պայմանների ձևավորումը նոր աշխատատեղերի ստեղծման և առկա աշխատատեղերի նորացման գործընթացի համար:

Աշխատուժի զբաղվածության ռազմավարական խնդիրները պետք է դառնան տնտեսապես ակտիվ բնակչության զբաղվածության, աշխատանքային հարաբերու-թյունների իրավական կարգավորումը: Մշակելով զբաղվածության քաղաքականության ծրագիր, կարևորվում է նոր աշխատատեղերի ստեղծումը, աշխատուժի վերամասնագիտացումը, որակավորման բարձրացումը: Կարևոր նշանակություն են ստանում այնպիսի միջոցառումների ծրագրերի մշակումը, ինչպիսիք են փոքր և միջին ձեռնարկատիրության խրախուսումը, գործազուրկներին ֆինանսական աջակցությունը,

սեփական գործ սկսելու նպատակով, երիտասարդներին աշխատանքի շուկա ներգրավելը, ուսումնական կենտրոնների հիմնումը, գործազուրկների վերամաս-նագիտացման և որակավորման բարձրացման համար:

Առավել ընդգրկուն չքավորությունից խուսափելու համար և աղքատության առկա մակարդակը կրճատելու համար պետք է ապահովել երկրում առկա կառուցվածքային հիմնախնդիրների լուծումը: Պետք է բարելավվի պետական կառավարման համակարգը, կոռուպցիայի դեմ պայքարը, ապահովվի մրցակցության հավասար հնարավորու-թյուններ, կատարելագործվի դատական համակարգը և բարձրանա բնակչության իրավական պաշտպանվածության մակարդակը: Արագ զարգացող հասարակության մեջ յուրաքանչյուր մարդ ապահովագրված չէ տնտեսական, սոցիալական տարբեր ռիսկերի ազդեցությունից (գնաճ, գործազրկություն, անապահով ծերություն, հաշման-դամություն և այլն): Այս առումով, մարդու նյութական անապահովությունը, խոցելիությունը, ինչպես նաև աղքատությունն անխուսափելի է և նման հիմնախնդիրների առաջացումը պահանջում է լուծում, որը պետք է իրականացնի պետությունը: Վերջինս, հասարակությանը սոցիալական ընդվզումներից զերծ պահելու համար, շահագրգռված է սոցիալական ոլորտի կայունության հաստատմանը և բնակչության արժանավայել կյանքի պայմանների ստեղծմանը: Այդ առումով, պետության կողմից իրականացվող միջոցառումներն ամրագրվում են օրենսդրությամբ: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական պետություն է, որը պետք է վարի ակտիվ սոցիալական քաղաքականություն:

Վերջինը որպես պետական քաղաքականության հիմնական բաղադրատարր՝ պետության գործունեությունն է՝ ուղղված երկրում առկա սոցիալական բնույթի հիմնախնդիրների լուծմանը, մասնավորապես այնպիսի իրավիճակների, երբ սահմանափակվում է մարդու նվազագույն պահանջմունքների բավարարումը, հասարակությունում սոցիալական համերաշխության ստեղծումը, վերջին հաշվով, հասարակության յուրաքանչյուր անդամի՝ պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված զգալու ընկալումը: Այլ կերպ ասած սոցիալական

քաղաքականությունը սոցիալական հիմնախնդիրների կոլեկտիվ լուծման ռազմավարությունն է[34] :

Սոցիալական պաշտպանության բնագավառը ՀՀ պետական քաղաքականության գերակա ուղղություններից է, որը կարգավորվում է մի շարք օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով, համաձայն որոնց սոցիալական երաշխիքներ ու ծառայություններ են սահմանվում բնակչության տարբեր շերտերի համար: Սոցիալական պաշտպանության հիմնական սկզբունքներն են՝ մարդասիրությունը, սոցիալական արդարությունը, հասցեականությունը, համալիրությունը, անձի իրավունքների և ազատությունների ապահովումը: ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգն իր մեջ ներառում է հետևյալ նպատակային քաղաքականությունը (գծապատկեր 3.):

Սոցիալական աջակցության հիմնական նպատակը կյանքի դժվարին վիճակում հայտնված անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) հիմնական պահանջ-մունքների ու սոցիալական կարիքների բավարարումն է, անձի ընդգրկվածությունը հասարակության մեջ, նրա սոցիալական մեկուսացման կանխարգելումը, և, վերջին հաշվով, կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելումը: Հենց սոցիալական ծառայությունների գործունեությունն էլ ուղղված է այս նպատակների իրականացմանը:

Սոցիալական ապահովությունը պետության կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական միջոցառումների համակարգ է՝ ուղղված ծեր և անաշխատունակ քաղաքացիների, մայրության ու մանկության ապահովությանը, աշխատունակության նախապահպանմանը և վերականգնմանը:

Սոցիալական ապահովագրությունն աշխատանքի, առողջության, աշխատու-նակության, կյանքի և եկամտի կորստի հետ կապված սոցիալական ռիսկերից բնակչության ապահովումն է՝ հիմնվելով կորստի հատուցման կոլեկտիվ համերաշխության սկզբունքի վրա:

ՀՀ բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները վկայում են, որ ներկայումս գոյություն ունի բնակչության խավերի միջև ծայրաստիճան բևեռացում, եկամուտների խիստ անհավասար բաշխում և աղքատության մակարդակի

[34] Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Տիգրան Մեծ», 2006, էջ 12

բարձրացում: Դա պահանջում է պետության ակտիվ սոցիալական քաղաքականության իրականացում՝

ուղղված բնակչության աղքատացման ռիսկի նվազեցմանն ու աղքատ բնակչության հնարավորությունների ընդլայնմանը, ինչպես նաև եկամուտների բաշխման անհավասարության մեղմմանը:

Գծապատկեր 3

ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգ[35]



Նշյալ հիմնախնդիրների լուծումը հնարավորություն կտա ոչ միայն աղքատ խավի կենսամակարդակի բարձրացմանը, այլև միջին խավի ձևավորմանը և բարգավաճմանը, քանի որ հենց միջին խավն է տնտեսության զարգացման հիմքը ու դրա հիմքերի ամրապնդումը: Իսկ մեզանում միջին խավ ձևավորելու համար անհրաժեշտ է բարձրացնել բնակչության եկամուտները, որի համար պետությունը պետք է որդեգրի նվազագույն աշխատավարձի, կենսաթոշակների, նպաստների և այլ նվազագույն սոցիալական երաշխիքների մակարդակի բարձրացման կուրս:

Վերջին ժամանակներում ՀՀ կառավարության պետական ծախսերի ոլորտում իրականացվող քաղաքականության շրջանակներում սոցիալական պաշտպանությունը դիտվել է որպես գերակայություն: Ըստ այդմ էլ, նկատվել է ՀՀ պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճի միտում:

[35] Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017, էջ 15

2009-2015թթ. պետական բյուջեի ծախսերում սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերի տեսակարար կշռի շարժընթացը վկայում է, որ 2009թ. համեմատ սոցիալական պաշտպանությանն ուղղված ծախսերը 2012թ. ավելացել են, ինչը հիմնականում պայմանավորված է ապահովագրական կենսաթոշակների, նպաստների և միանվագ դրամական օգնությունների ծախսերի աճով: 2014թ. համեմատ 2015թ. Սոցիալական պաշտպանության ծախսերն ավելացել են 12%-ով: Կարծում ենք, ծախսերի ավելացումը հիմնականում պայմանավորված է կենսաթոշակների և նպաստների ավելացմամբ, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի հետ կապված ծախսերով: Սոցիալական պաշտպանությանն ուղղվող ծախսերում մեծ տեսակարար կշիռ են կազմում կենսաթոշակներին ուղղվող ծախսերը, որոնք անվանական արտահայտությամբ 2009 թվականից շարունակական աճ են ունեցել և 2015թ. կազմել 283.2 մլրդ դրամ: Դա պայմանավորված է թե աշխատանքային կենսաթոշակների, և թե կուտակային կենսաթոշկային համակարգի ներդրման ծախսերով:

Չնայած այն հանգամանքին, որ սկսած 2004թ. ՀՀ կառավարության քաղաքականության շրջանակներում նկատվում է կենսաթոշակների բազային մասի, հետևաբար նաև միջին կենսաթոշակների ամենամյա բարձրացում անվանական արտահայտությամբ, այնուհանդերձ, դրանց չափերը ոչ միայն չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր կենսաթոշակ (մինչդեռ պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունք-ներից է կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը[36]): Այստեղից հետևություն, որ ՀՀ պետա-կան բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող ընդհանուր ծախսերի մակարդակի կայուն աճն ավելի շատ պայմանավորված է մի շարք այլ գործոններով:

2015թ. վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ տնային տնտեսությունների 13.5%-ի համար որպես եկամտի աղբյուր են համարվում ընտանեկան

[36] «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ընդունված 22.12.2010թ., ՀՕ-243-Ն

նպաստները 374: Հետևաբար, աղքատ ու անապահով ընտանիքների սոցիալական աջակցման բնագավառում կարևորվում է Ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության ծրագիրը, որը 2014թ. հունվարի 1-ից վերանվանվել է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագիր (այսուհետ ԸԿԲՆԾ), որն ուղղված է աջակցելու անապահով ընտանիքների աջակցմանն ու աղքատության կրճատմանը: Վերջինը ՀՀ պետական բյուջեի ամենակարևոր սոցիալական ծրագրերից մեկն է, որն իր մեջ ներառում է ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար, և սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար, որոնց շահառուներն են համարվում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքները, և հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու, ընտանիքի անդամի մահվան դեպքերում տրվող միանվագ հրատապ և եռամսյակային հրատապ օգնություն: Նշյալ ծրագրերը կարգավորվում են 2013թ. դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունված «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով, սահմանվում են պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է, որի նպատակն է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը:

[37] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, էջ 176

Աղյուսակ 5.

ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգի ֆինանսավորման ցուցանիշները 2009-2015թթ[38]

Անվանումները	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Սոցիալական պաշտպանության գծով պետ. բյուջեի ծախսեր՝ անվանական արտահայտությամբ, մլրդ դրամ	243.6	244.2	256.2	291.7	297.4	342.5	383.7
Սոցիալական պաշտպանության գծով պետ. Բյուջեի ծախսեր՝ ՀՆԱ նկատմամբ, %	7.9	7.0	6.8	7.3	7.0	7.1	7.6
Սոցիալական պաշտպանության ծախսեր՝ պետ.բյուջեի ծախսերի նկատմամբ, %	26.2	25.6	26.0	29.0	26.0	27.7	27.2
Կենսաթոշակների տրամադրման ծախսեր, մլրդ դրամ	177.6	178.5	188.4	199.0	200.0	240.5	283.2
Կենսաթոշակային ծախսերի տեսակարար կշիռը սոցիալական պաշտպանության ծախսերում, %	72.9	73.1	73.5	68.2	67.2	70.2	73.8

Անհրաժեշտ է նշել, որ նպաստի ստացման իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով՝ համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. N-2317-Ն որոշմամբ հաստատված ընտանիքի անապահովության գնահատման կարգի ընտանիքի կամ տնային տնտեսության անապահովության գնահատման հիմքում դրվում են աղքատությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքի անաշխատունակ անդամների թիվը, ընտանիքի անդամների միջին ամսական եկամուտը, ընտանիքի բնակարանային պայմանները և այլն, որոնցից յուրաքանչյուրն ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով էլ որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: 2008թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. ներառյալ ընտանեկան և սոցիալական նպաստի իրավունքի

[38] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N-442

ճանաչման սահմանային միավորը սահմանվել է 30: Ընտանեկան և սոցիալական նպաստների բազային մասը 2016թ. օգոստոսի 1-ից սահմանվել է 18000 դրամ՝ 2010թ. 13500 դրամի, 2013թ. 16000 դրամի և 2015թ. 17000 դրամի դիմաց: ՀՀ-ում ըստ 2010-2015թթ. ընտանեկան կամ սոցիալական նպաստի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2010-2015թթ.[39]

Անվանումներ	2010	2011	2012	2013	2014	2015
Հաշվառված ընտանիքները (% ՀՀ ընտանիքների թվից)	17.11	14.91	15.9	16.5	17.2	17.4
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	78.77	78.94	77.69	79.78	77.71	77.57
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	13.50	11.77	12.36	13.16	13.37	13.53
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	78.28	78.07	80.69	76.97	76.27	76.91
ՀՀ պետական բյուջեով նախա-տեսված միջոցներ (մլրդ դրամ)	31.022	35.497	37.105	37.105	37.105	38.361
Նպաստառու ընտանիքների թիվ	105005	91575	96309	102570	104130	105408
Նպաստի միջին չափ, դրամ	26850	26850	29350	29350	30350	30350

Աղյուսակ 6-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ, եթե 2010-2013թթ. ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված ընտանիքների տեսակարար կշիռը ՀՀ ընտանիքների ընդհանուր թվում ունեցել է կրճատման միտում, ապա 2015թ. այն արդեն ավելացել է: Իսկ հաշվառված ընտանիքների մեջ նպաստառու ընտանիքների տեսակարար կշիռը 2015թ. կազմել է 77.57%, որը բավականին բարձր ցուցանիշ է: Նպաստի միջին չափը 2010-2011թթ. կազմել է 26850 դրամ, 2012-2013թթ.՝ 29350 դրամ, իսկ 2014թ. նկատվել է աճ՝ կազմելով 30350 դրամ, որը պահպանվել է նաև 2015թ.:

Համակարգում նպաստների միջին չափի աճին զուգահեռ նպաստառու ընտանիքների թիվը կրճատվել է մինչև 2013թ: Իսկ ահա սկսած 2012թ. նկատվել է նպաստառուների թվի ավելացում՝ 2014թ. կազմելով 104130, իսկ 2015թ. կազմել է 105408՝ գերազանցելով 2010թ. տվյալները: ՀՀ ԱՎԾ տվյալները վկայում են, որ 2015թ.

[39] Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը 2015, 2016, էջ 242

2010թ. համեմատ աղքատության մակարդակը նվազել է 6%-ով, մինչդեռ Ջինիի գործակիցն ըստ եկամուտների և սպառման աճել է՝ համապատասխանաբար կազմելով 2015թ. 0.374 և 0.279, 2010թ. 0.362 և 0.265 դիմաց: Իսկ սա նշանակում է, որ աղքատության մակարդակի կրճատումը չի հանգեցրել աղքատ բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, այլ հակառակը, այն վատացրել է: Դա պայմանավորված է նրանով, որ, ըստ էության, նպաստառու ընտանիքները պետք է լինեն ծայրահեղ և շատ աղքատ՝ տեսականորեն բացառելով ոչ աղքատ ընտանիքներին: Այնինչ, համակարգում մեծ է ինչպես ընդգրկման սխալը, այնպես էլ չընդգրկման սխալը:

Եթե որպես համակարգի շահառուներ դիտարկենք բոլոր աղքատներին, ապա չընդգրկման սխալը կկազմի 73%, այսինքն՝ 2015թ. աղքատների 73%-ը փաստացի չեն եղել համակարգում, իսկ շատ աղքատների դեպքում չընդգրկման սխալը կկազմի 63%, ծայրահեղ աղքատների դեպքում՝ 56%, և արդյունքում ստացվում է, որ ծայրահեղ աղքատների նվազագույնը 56% չի օգտվում ԸԿԲՆԾ-ից: Ծայրահեղ աղքատների համար ընդգրկման սխալը կազմել է 95%, այսինքն՝ համակարգում ընդգրկվածների 95% ծայրահեղ աղքատներ չեն: Հետևաբար, անհրաժեշտ է հստակեցնել ԸԿԲՆԾ-ի նպատակը, այսինքն որն է աղքատության հաղթահարումը և ծայրահեղ աղքատության էականորեն կրճատումը:

Այս համակարգում կարևորվում է նաև անապահովության գնահատման բանաձևի փոփոխությունը, որի հիմքում ներկայումս ընկած է փորձագիտական մեթոդը, այսինքն՝ բանաձևը մշակվել է փորձագետների կարծիքի ուսումնասիրության արդյունքում: Ըստ որի, առաջարկվում է վերանայել բանաձևում կիրառվող ցուցանիշներն ու գործակիցները, աստիճանաբար անցում կատարել վիճակագրական վերլուծական մեթոդով գնահատման նոր բանաձևին՝ հիմք ընդունելով տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության բազաները և այս ամենի արդյունքում կմեծանա ԸԿԲՆԾ-ի հասցեականությունը:

Յուրաքանչյուր նպաստառու ընտանիք 2015թ. ստացել է ամսական 30350 դրամ, որն ուղղվում է ընտանիքում 1-ից ավելի մարդկանց պահանջմունքների բավարարմանը, և դա այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում ըստ տնային տնտեսությունների հարցման արդյունքների՝ մեկ շնչի հաշվով գոյատևելու համար անհրաժեշտ միջին ամսական եկամտի չափը կազմել է 95680 դրամ, իսկ լավ ապրելու համար՝ 250672

դրամ: Հետևաբար, համակարգում առկա են բացթողումներ, քանի որ վճարվող նպաստները նույնիսկ բավարար չեն 1 չափահաս անձի գոյատևման համար:

Ըստ Համաշխարհային բանկի հաշվարկների՝ ծրագրից հեռացվելուց հետո տնային տնտեսությունների միջին եկամուտը 1 շնչի հաշվով ավելի բարձր է եղել, քան ծրագրում ընդգրկված լինելու ընթացքում, սակայն տարբերությունը համեմատաբար փոքր է և ամսական կտրվածքով կազմում է մոտ 5000 դրամ: Հետևաբար, անհրաժեշտ է ծրագրից հեռացվելու ավելի բարձր շեմ սահմանել:

Շատ հաճախ կյանքի դժվարին վիճակում հայտնված ընտանիքները ծրագրի իրազեկվածության, համապատասխան փաստաթղթերի բացակայության և, վերջին հաշվով, պետական մարմինների նկատմամբ վստահության պակասի արդյունքում չեն կարողանում օգտվել իրենց կարգավիճակը բարելավող միջոցառումներից: Հետևաբար, կարևորում ենք սոցիալական աշխատողների օբյեկտիվ ու արդյունավետ աշխատանքները՝ ուղղված այդ ընտանիքների հայտնաբերմանը և համակարգում հաշվառելը, որը կնպաստի բնակչության իրազեկման մակարդակի բարձրացումը տնային այցելությունների միջոցով, այսինքն՝ սոցիալական ծառայությունները պետք է բացահայտեն սոցիալապես անապահովներին, այլ ոչ թե հիմք ընդունեն միայն նպաստառու դառնալ ցանկացողների դիմումները: Չնայած, վերջինիս արդյունքում կարող է պետբյուջեից հատկացվող նպաստների հետ կապված դժվարություններ առաջանա, սակայն դրանով կկարգավորվեն ծայրահեղ աղքատների սոցիալական խնդիրները:

Այսպիսով, թեև պետությունը վարում է ակտիվ սոցիալական քաղաքականություն և բնակչության առանձին շերտերին տրվող սոցիալական երաշխիքները՝ կենսաթոշակները, նպաստները, լուրջ գործիք են աղքատության դեմ պայքարելու համար, այնուհանդերձ, ըստ պաշտոնական տվյալների՝ ՀՀ բնակչության ամեն երրորդն աղքատ է, իսկ ոչ պաշտոնական տվյալների՝բնակչության կեսից ավելին: Հետևաբար, մի կողմից սոցիալական քաղաքականությունը պետք է ուղղված լինի սոցիալական երաշխիքների քանակական ավելացմանը, իսկ մյուս կողմից էլ պետք է մշակվեն և կիրառվեն այնպիսի մեխանիզմների համակարգ, որի միջոցով անապահով, աղքատ մարդկանց, ընտանիքներին հնարավորություն կտրվի դուրս գալ այդ իրավիճակից, միաժամանակ կկարողանան բավարարել իրենց նվազագույն պահանջմունքներն ու կունենան արժանապատիվ կյանք և պահպանել իրենց գոյությունը՝ մասամբ էլ պետությունից անկախ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության հիմնական եզրակացություններն ու առաջարկություններն են.

1. XXI դարի սկզբին հասարակությունը մուտք է գործում նոր քաղաքակրթություն, որը կարելի է անվանել «կյանքի որակի քաղաքակրթություն», և շրջանառության մեջ են մտնում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «արժանապատիվ կյանքը», «կյանքի որակը»:

2. Այդպիսի քաղաքակրթության ձևավորման ընթացքում փոփոխվում են պատկերացումները հասարակական զարգացման շարժիչ ուժերի մասին: Նոր երևույթները ու գործընթացները պահանջում են կյանքի մակարդակի և կյանքի որակի հիմնախնդիրների նոր մեկնաբանություններ, որտեղ կարևորվում է ակտիվ կյանքի որակի համար մրցակցությունը: Ժամանակակից պետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակն է դառնում բարձր, արժանապատիվ կենսամակարդակի ապահովումը, իսկ կյանքի բարձր որակի ապահովման համակարգի ձևավորումը՝ պետության գործունեության գերակա ուղղությունը: Սոցիալ-տնտեսական զարգացման բոլոր մեթոդները և մեխանիզմներն ուղղված են կենսամակարդակի ավելացմանը և բարեկեցության բարձրացմանը՝ կյանքի որակի բարելավմանը, որը հասարակությունում ընթացող ցանկացած վերափոխման չափանիշն է ու վերջնական արդյունքը:

3. Ներկայումս կարևոր նշանակություն է ստանում կյանքի որակի բաղադրիչների ցուցանիշների համակարգի կազմը ու կառուցվածքը: Կյանքի որակի բաղադրիչների ու նրանց ցուցանիշների բազմակիացումը (մանրամասնեցումը) կարևորվում է բնակչության կյանքի որակի բազմակողմանի և սպառիչ վերլուծության և դրա հիման վրա սոցիալական քաղաքականության մշակման և իրագործման տեսանկյունից:

4. Կարևորություն է ստանում կյանքի որակի գնահատումը նրա տարբեր ցուցանիշների համադրման միջոցով: Քանի որ գործնականում հնարավոր չէ համապատասխան տեղեկատվություն և տվյալներ հավաքել բոլոր ցուցանիշների համար, այդ պատճառով էլ կյանքի որակի վերլուծությունը և գնահատումը ներկայացվել է յուրաքանչյուր բաղադրիչի համար առանձին-առանձին, այնուհետև համեմատելով,

խմբավորելով և ամբողջացնելով բացահայտվել է կյանքի որակը տարբեր ցուցանիշների կտրվածքով և ամբողջության մեջ:

5. Անցած տարիներին հանրապետությունում տնտեսական աճի բարձր տեմպերը զբաղվածության աճով աչքի չեն ընկել, հետևաբար տնտեսական աճը եղել է աշխատատեղեր չավելացնող աճ, ավելին այն աչքի է ընկել աշխատատեղերի կորստով:

6. Աղքատության և անհավասարության առկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում հանգեցնում է բնակչության կյանքի որակի անցանկալի մի շարք երեույթների.

- Հասարակության բևեռացման առկա վիճակի շարունակությունը սպառնում է խորացնել հասարակության շերտերի փոխադարձ օտարումը,
- աղքատության մեծ չափերը խոչընդոտում են քաղաքացիական հասարակության և քաղացիական համաձայնության կայացմանը,
- աղքատների բազմահազարանոց խավն ավելի ու ավելի է ետ մնում մարդկային զարգացման ընդհանուր օրինաչափություններից ,
- աղքատության ներկայիս տարածվածության պայմաններում խիստ սահմանափակվում է քաղաքացիների ինքնաներդրման, ինքնակազմակերպման, ինքնահաստատման և ինքնահրացման հնարավորությունները, որն էլ նրանց մղում է արտագաղթի:

7. Հայաստանի Հանրապետությունում աղքատության հաղթահարման ներկա գործընթացը չի ներառում մարդու հոգևոր, մշակութային և սոցիալական ծառայություն-ների իրականացումը, ըստ այդմ աղքատության հաղթահարումը ՀՀ–ում սեղմվել և վերածվել է նյութական նվազագույն կարիքների բավարարման մի գործընթացի, որը հանդիսանում է բնակչության նյութական գոյության տարրական պայմանների լուծում:

8. Երկրի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը հնարավոր է միայն տնտեսության զարգացման պայմաններում, որը պետք է ունենա կայուն բնույթ, իսկ տնտեսական աճի հետևանքներով ձեռք բերված արդյունքները հնարավորինս հավասարաչափ պետք է բաշխվեն հասարակության բոլոր շերտերի միջև:

Այսպիսով, նկատի ունենալով կյանքի որակի կարգավորման միջազգային փորձը և վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում բնակչության կյանքի որակի ներկայիս վիճակը՝ ներկայացվում են հետևյալ հիմնական առաջարկությունները.

1. Սոցիալական ոլորտի բարելավման շրջանակներում՝ սոցիալական ապահովության ավանդական համակարգից անցնել առավելապես սոցիալական ապահովագրության համակարգի: Մասնավորապես անհրաժեշտ է ստեղծել սոցիալական ապահովագրության այնպիսի համակարգ, որը կներառի՝ կենսաթոշակային ապահովագրում, գործազրկությունից և հիվանդություններից ապահովագրումը, մասնագիտական և աշխատանքային հիվանդություններից և աշխատանքի վայրում դժբախտ պատահարներից ապահովագրումը, ընտանեկան և չքավորության նպաստները:

2. Սոցիալական աջակցության ոլորտի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար՝ սոցիալական աջակցության համար տրամադրվող միջոցների հասցեականության բարձրացում և սոցիալական աջակցության բնագավառի աշխատանքների կանոնակարգում, մասնավորապես, կոռուպցիայի վերացում և այդ համակարգի աշխատակիցների նկատմամբ պատասխանատվության բարձրացում:

3. Հայաստանի Հանրապետության բնակչության կյանքի բարձր որակի ապահովման կառուցակարգեր ապահովելու համար առաջարկվում են բնակչության կյանքի որակի բարելավման հետևյալ հիմնական ուղիները .

- կյանքի որակի բարելավման առաջնային ուղին տնտեսության զարգացումն է, տնտեսության կայուն աճի ապահովումը երկարաժամկետում,
- աշխատատեղերի ստեղծումը և բնակչության զբաղվածության ապահովագրումը,
- բաշխման հարաբերությունների կարգավորումը պետության կողմից և դրա վերահսկողության իրականացումը,
- ստվերային տնտեսության նվազեցումը,
- սոցիալական ընդգրկուն ծրագրերի մշակումը և դրանց իրագործումը,
- առողջապահական ծառայությունների ընդլայնումը և զարգացումը,
- կրթության և գիտության ոլորտի պետական հոգածությունը և օժանդակությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օրենքներ և իրավական ակտեր

1. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի N 994-Ն որոշում

2. Աղքատության նվազեցման միջանկյալ ռազմավարական ծրագիր, Հայացք տնտեսությանը, 2001թ. N 3

3. «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք, 28.12. 2013

4. «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքը, 11.12.2013

5. «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին», 16.03.2004

6. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, 21.06.2014

7. «Պետական կենսթոշակների մասին» ՀՀ օրենքը, 22.12.2010

8. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, 17.12.2014

9. ՀՀ կառավարության N 5-Ն որոշում. 2016թ. Ընտանեկան նպաստի, Սոցիալական նպաստի, Հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին, 20. 01.2016

10. ՀՀ 2014-2025 թթ, հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշում

11. ՀՀ 2014-2016թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին, ՀՀ կառավարության 2013թ. հուլիսի 4-ի N 740 –Ն որոշումը

12. ՀՀ զբաղվածության 2013-2018թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության 2012 թ. նոյեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշում

Մասնագիտական գրականություն

13. Արմենակյան Ռ., Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաաքականությունը, Եր., 2004

14. Գալոյան Ռ., Բնակչության կյանքի որակի բարելավման հիմնական ուղիները ՀՀ-ում, Եր., 2011

15. Դավոյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Հ., «Վերափոխումները անցումային երկրների տնտեսություններում», Եր., «Տիգրան Մեծ», 2003

16. Թադևոսյան Ա., Աղքատության հիմնախնդիրները պետականության զարգացման և ամրապնդման տեսանկյունից, Եր., 2002

17. Խեչոյան Թ., Երջանակության տնտեսագիտություն, մեկնաբանություններ և մոտեցումներ, Հանրային կառավարում, 2009, N 1, էջ 46-58

18. Խեչոյան Թ., Երջանկության տնտեսագիտություն. Ֆինանսատնտեսական ճգնաժամը, եկամուտները ու երջանկությունը, Հանրային կառավարում, 2010, N 1, էջ 62-68

19. Խեչոյան Թ., Հարոյան Ռ., Զբաղվածության և աղքատության հիմնա-խնդիրները ՀՀ-ում: Պետական կառավարման ժողովրդարացման հիմնահարցեր: Գիտաժողովի նյութերի ժողովածու, Գիրք 2, Եր., 2000թ.

20. Խեչոյան Թ., Աշխատանքի շուկան և կադրերի զբաղվածության հիմնահարցը Հայաստանում: Պետական քաղաքականության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում: Գիտաժողովի նյութերի ժողովածու, Գիրք 4, Եր., 2002թ.

21. Հայրապետյան Ա., Սոցիալական աջակցության և գործազրկության նպաստը որպես աղքատության հաղթահարման հորձիք, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2017, N 1, էջ 45-47

22. Ղանթարչյան Լ., Սոցիալապես անապահով խավերի կենսամակարդակի բարձրացման պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., 2017

23. Մակարյան Ա., Բաբայան Ա., Հայաստանի Հանրապետությունում Կյանքի որակի ցուցանիշի (QoL Index) հետազոտություն: Հետազոտության մեթոդաբանություն, Մշակված է «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվություններիր ինստիտուտի պատվերով, Եր., 2010

24. Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի ինդեքսը 2011թ.: Սոցիոլոգիական հետազոտություն, Վերջնական զեկույց QL-Index 2 / 2011, Եր., 2012

25. Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2012, Սոցիոլոգիական հետազոտություն, Վերջնական զեկույց: QL Index – 3 / 2012, Եր., 2013

26. Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2014, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-5/14: Վերջնականզեկույց FR-21arm/14, Եր., 2015

27. Մանուկյան Ս., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի հետազոտություն 2016, Սոցիոլոգիական հետազոտություն QoLI-7/16: Վերջնական զեկույց FR-22arm/17, Եր., 2017

28. Մարկոսյան Ա., «Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները, «21-րդ դար», #3 (5), 2004, էջ 31-34:

29. Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2006,

30. Սարիբեկյան Ս., Կյանքի որակի բաղադրիչները, http://kantegh.asj-oa.am/199/1/237-245.pdf

31. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2016, http://www.armstat.am/am/?nid=80&id=1819

32. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2017, http://www.armstat.am/am/?nid=82&id=1988

33. Гелбраш Дж., Общество изобилия. М.. 1968

34. Волгин Н. А., Гриценко Н. Н. Социальное государство: учебник. М., 2003

35. Макконел К.Г., Брю С.Л., Экономика, 16-е, Москва, 2006г

36. Пигу А., Экономическая теория благосостояния, М., 1985

37. Народонаселение: энциклопедический словарь. Ред. колл. А.Я. Кваша, Г. Г. Меликян (гл. ред-J и др. М., 1994

38. Джеймс Вулфенсон, Франсуа Бургиньон, «Развитие и сокращение масштабов бедности: оглядываясь в прошлое, заглядывая в будущее», Всемирный банк, октябрь 2004г

39. Всемирный банк. На пороге 21 века. Доклад о мировом развитии 1999/2000 М., 2000

40. Рынок труда и социальная политика в Центральной и Восточной Европе. Переходный период и дальнейшее развитие. Под ред. Н. Барра. М., 1997

41. Философский энциклопедический словарь. —М.: Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев, С. М. Ковалёв, В.Г.Панов. 1983.

42. Ferreira Francisco HG, and Michael Walton, eds., World development report 2006, Equity and development, Vol. 28, World Bank Publications, 2005.

43. Levin V., Work Disincentive Effects of Targeted Social Assistance Programs: The Case of Armenia's Family Benefit (PowerPoint presentation), World Bank, Europe and Central Asia Impact Evaluation Day, Washington, DC, 2011

44. Abdulai A., C. Barrett and J. Hoddinott, Does Food Aid Really Have Disincentive Effects? New Evidence from Sub?Saharan Africa, World Development 33 (10), 2005.

45. Zandi M., 'The Economic Impact of the American Recovery and Reinvestment Act. Report, January 21, 2009.

46. Hirway Indira, M.R. Saluja and Bhupesh Yadav, Analysing multiplier impact of NREGA works through village SAM modeling, Annandale-on-Hudson, NY: The Levy Economics Institute of Bard College, New York, United State, 2009, p. 4.

47. Bush Jennifer, Ejigayehu Tefera, Yeshitla Admassu, and Jamal Abdella, Ethiopia Food Aid Impact Study: Meda Welabu Woreda, Christian Aid Study, March, 2001.

48. Robalino D., Walker I. and L. Rawlings, Building Social Protection and Labor Systems -Concepts and Operational Implications, Mimeo. World Bank, 2011, p. 5.

49. Michael Weber, Improving access to jobs and earnings opportunities: the role of activation and graduation policies in developing countries, No. 67610. The World Bank, 2012., p. 18.

50. Coleman J.S., Social Capital in the Creation of Human Capital/Social Capital: a Multifaceted Perspective, Eds. P. Dusgupta, I. Serageldin. Wash. DC: World Bank, 2000, p.19.

51. Papageogyiou J., Quality of life indicators, 1976

Համացանցային կայքեր

52. www.arlis.am

53. http://www.pfrf.ru/grazdanam/pensionres/soc_doplata/

54. www.cidcm.umb.edu/inscr/polity.:

55. http://www.gov.am/files/docs/1322.pdf

56. http://www.gov.am/files/docs/2015.pdf

57. http://www.gov.am/files/docs/2207.pdf

58. http://www.ilo.org/global/lang--en/index.htm

59. www.mss.am/arm/volort/socaphimn.htm

60. http://www.parliament.am/legislation.php?sel=alpha&ltype=3&lang=arm

61. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=4008&lang=arm

62. http://www.ssa.am/arm/legislation/legal-acts/%D5%95%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80/

63. http://www.ssa.am/arm/pensions-system/pension-security/

64. http://www.ssa.am/arm/pensions-system/voluntary-funded-pension/

65. http://www.ssa.am/arm/benefits/%D5%86%D5%BA%D5%A1%D5%BD%D5%BF%D5%B6%D5%A5%D6%80/

66. www.worldbank.org/wbi/governance/govdata2002/

67. http://www.worldbank.org/en/understanding-poverty